

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Սպիտակ Տան Դիրքի Կարծրացումը՝ Իսրայելի Նկատմամբ

ՄԱԿ-ի Ապահովության Խորհուրդը որոշում կայացուց կազա-  
յի մեջ զինադադար հաստատելու  
կապակցությամբ, երբ Միացեալ  
Նահանգներու դեսպանը չօգտա-  
գործեց վեթոյի իր իրաւունքը, այդ-  
պիսով ընթացք տալով զինադա-  
դարի բանաձեւի հաստատման:

Ամիսներ է վեր կազայի մեջ  
շարունակուող պատերազմի տար-  
բեր հանգրուաններուն Ապահովու-  
թեան Խորհուրդէն ներս բազմա-  
թիւ փորձեր եղան զինադադարի  
բանաձեւ ընդունելու կապակցու-  
թեամբ, սակայն այդ փորձերը ծա-  
խողութեան մատնուեցան երբ  
Ապահովութեան Խորհուրդի հինգ  
մնայուն անդամներէն մէկը կամ  
միւսը՝ օգտագործելով իր վեթոյի  
իրաւունքը՝ վիժեցուց զինադադարի  
բանաձեւի հաստատումը:

Ամերիկայի կողմէ ձեռնարկ  
մնալու քայլը ունագրաւ էր այն  
պատճառաւ, որ Միացեալ Նա-  
հանգները միշտ կողմնորոշուած է  
ի նպաստ Իսրայելի եւ միջազգա-  
յին ատեաններէն ներս պաշտպա-  
նած է Իսրայելի շահերը՝ անտեսե-  
լով Պաղեստինցի ժողովուրդի  
իրաւունքները: Այս մօտեցումը  
պայմանաւորուած է Զրէական  
լրացի ուժեղ ազդեցութեամբ եւ  
Ամերիկացի ժողովուրդին մօտ  
տարիներու ընթացքին Իսրայելի  
նկատմամբ ձեւաւորուած համակ-  
րանքով: Այդ պատճառաւ ալ եւ  
Դեմոկրատ եւ Զանրապետական  
վարչակարգերու օրով Իսրայել վա-  
յելած է անվերապահ աջակցու-  
թիւն: Սակայն, կազայի պատերազ-  
մէն ասդին, երբ քանդուած բնա-  
կելի շէնքերու ու պաղեստինցի զո-  
հերու տեսարանները սկսան  
յայտնուիլ Ամերիկեան հեռատե-  
սիլներու պաստառներուն վրայ,  
հանրային կարծիքին մօտ տեղի  
ունեցաւ զգալի շեղում՝ ի նպաստ  
Պաղեստինցիներուն: Այս տեղա-  
շարժը ամենէն աւելի զգալի դար-  
ձաւ երիտասարդ սերունդին մօտ:  
Պատերազմի ընթացքին նշմարե-  
լի դարձաւ նաեւ Արաբ ծագումով  
Ամերիկացիներու հետզհետէ աճող  
ներկայութիւնը Ամերիկեան քա-  
ղաքական թատերաբեմին վրայ:  
Տասը կամ քսան տարի առաջ հա-  
զիւ թէ լսելի կը դառնային Արաբ-  
ներու ձայները՝ եւ կամ նկատի  
կ'առնուէր անոնց տեսակետները:

Յոկտեմբեր 7-ին, երբ Զամա-  
սի զինեալները յարձակեցան Կա-  
զայի մօտակայ Իսրայելական բնա-  
կավայրերուն վրայ՝ սպանելով  
1200 քաղաքացիներ ու պատանդ

## Միջուկային Ուժանիւրը Մեր Ռազմավարութեան Անկիւնաքարն Է. Նիկոլ Փաշինեան

Վարչապետ Նիկոլ Փաշինեան  
Պրիւքսէլի մէջ մասնակցած է Մի-  
ջուկային ուժանիւթի անդրանիկ  
զագաթաժողովին: Միջոցառման  
մասնակցած են նաեւ Ֆրանսայի  
նախագահ Էմանուէլ Մաքրոնը, Պել-  
ճիքայի վարչապետ Ալեքսանտր  
տը Քրուսն, Եւրոպական Յանձնա-  
ժողովի նախագահ Ուրսուլա Վոն  
տեր Լայենը, Եւրոպական Խոր-  
հուրդի նախագահ Շարլ Միշէլը,  
չարք մը երկիրներու նախագահ-  
ներ, վարչապետներ եւ ներկայա-  
ցուցիչներ:

Գագաթաժողովին վարչապետ  
Փաշինեան հանդէս եկած է ելոյ-  
թով, որուն մէջ, մասնաւորապէս,  
նշած է.

«Միջուկային ուժանիւթը մեր  
ուզմովարութեան անկիւնաքարն  
է, որն ապահովում է ինչպէս մեր  
երկրի ուժանիւթային անվտան-  
գութիւնը, այնպէս էլ կլիմայի  
փոփոխութեան մեղմացումը: Մենք  
ողջունում ենք զլիաւոր տնօրէն  
Կրոսիի ջանքերը՝ միջուկային ու-  
ժանիւթը կլիմայի փոփոխութեան  
մեղմացման ուղղուած բարձր մա-  
կարդակի քննարկումների առա-  
ջին պլան մղելու համար:

«Հայաստանի համար միջու-  
կային ուժանիւթը կարեւոր դեր է  
խաղում եւ օգնում է Փարիզի  
համաձայնագրով Ազգային մակար-  
դակով սահմանուած գործողու-  
թիւնների իրագործմանը: Տաս-



Վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Միջուկային  
ուժանիւթի անդրանիկ զագաթաժողովի ընթացքին

նամեակներ շարունակ Հայաստանի  
աթոմակայանը ծառայել է որպէս  
մեր ուժանիւթային համակարգի  
կարեւորագոյն տարր՝ ապահովե-  
լով ուժանիւթի արտադրութեան  
կայունութիւնը: Ներկայումս մեր  
երկրի ելեկտրութի մօտ 30%-ը  
ստացւում է միջուկային ուժանիւ-  
թից: Այդ կէտին համենլու մեր  
ճանապարհը փշոտ էր, որի գա-  
զաթնակէտն էր աթոմակայանի  
փակման դրամատիկ շրջանը: Այ-  
սօր մենք հպարտութեամբ կարող  
ենք փաստել, որ ի թիւս այլ  
կարեւոր բաների, այն նաեւ խորհր-  
դանշում եւ ամրապնդում է մեր

ինքնիշխանութիւնը»:

Միջուկային ուժանիւթի  
անդրանիկ զագաթաժողովի շրջա-  
նակին մէջ տեղի ունեցած է վար-  
չապետ Նիկոլ Փաշինեանի հանդի-  
պումը Եւրոպական Խորհուրդի նա-  
խագահ Շարլ Միշէլի, Ֆրանսայի  
նախագահ Էմանուէլ Մաքրոնի, Պել-  
ճիքայի վարչապետ Ալեքսանտր Տը  
Քրուսի եւ այլ ղեկավարներու հետ:

## Ատրպէյճանցիները Պէտք է Զեռանան ԶՅ Ինքնիշխան Տարածքներէն. Ֆրանսայի Վարչապետ

Ատրպէյճանցիները պէտք է  
հեռանան Հայաստանի ինքնիշխան  
տարածքներէն: Այս մասին յայտ-  
նած է Ֆրանսայի վարչապետ  
Կապրիէլ Աթալը:

Ռուսաստանը կ'ուզէ պատժել  
Հայաստանը խաղաղութեան եւ  
ինքնիշխանութիւնը յարգելու  
ձգտումին համար, սկզբունքներ,  
որոնք (Մոսկուան) կ'ոտնահարէ  
Ուքրանիոյ մէջ: Ռուսաստանը կ'ու-  
զէ նաեւ պատժել Հայաստանը այն  
բանին համար, որ Հայաստանը  
ընտրած է անպատժելութեան դէմ  
պայքարի ուղին՝ անդամակցելով  
Միջազգային Քրէական Դատարա-  
նին, եւ ուղղակի այն բանին հա-  
մար, որ ընտրած է ժողովրդավա-  
րութիւնն ու իրաւական պետու-  
թիւնը», ըսած է Ֆրանսայի վար-  
չապետը:

Ան նշած է, որ Ռուսաստանը  
չէ դատապարտած Ատրպէյճանի  
կողմէ ուժի կիրառումը Լեռնա-  
յին Ղարաբաղի մէջ. «Իրականու-  
թեան մէջ ան նոյնիսկ հաւանու-  
թիւն տուած է անոր, եւ, այսպէս  
կոչուած, ռուսական «խաղաղա-  
պահ» ուժերը թոյլ տուած են, որ  
մարդասիրական ճգնաժամը խո-  
րանայ»:

## Փաշինեան, Վոն Տեր Լայեն եւ Պլինքըն Ապրիլին Պիտի Զանդիպին Պրիւքսէլի Մէջ



Վարչապետ Նիկոլ Փաշինե-  
ան, Եւրոպական Յանձնաժողովի  
նախագահ Ուրսուլա Վոն տեր Լա-  
յեն եւ ԱՄՆ պետական քարտուղար  
Էնթրի Պլինքըն Ապրիլ 5-ին  
Պրիւքսէլի մէջ պիտի քննարկեն  
Հայաստանի զարգացման նպաստող  
եռակողմ համագործակցութեան ու-  
ղիները, «Արմէնիպրես»-ի հետ զրոյ-  
ցին ըսած է Անվտանգութեան Խոր-  
հուրդի քարտուղար Արմէն Գրի-  
գորեանը:

Գրիգորեան նաեւ տեղեկա-  
ցուցած է, որ միջոցառումը նպա-  
տակ ունի ամրապնդելու Հայաս-  
տանի դիմակայունութիւնը:

Ան քարտուղարը այլ մանրա-

մասնութիւններ չէ հաղորդած՝ նշե-  
լով, որ մօտակայ շրջանին միջո-  
ցառման մասին աւելի մանրամասն  
խօսելու հնարաւորութիւն կ'ըլլայ:

2023-ի Հոկտեմբեր 5-ին Փա-  
շինեան Կրանաստայի մէջ հանդի-  
պեցաւ Ուրսուլա Վոն տեր Լայենին  
հետ, քննարկեցին Լեռնային Ղա-  
րաբաղի հայութեան բռնի տեղա-  
հանութեան հետեւանքով ստեղծ-  
ուած իրավիճակը, տարածաշրջա-  
նային իրադրութեան, Հայաստան-  
ԵՄ համագործակցութեան օրա-  
կարգին վերաբերող հարցեր: Եւ-  
րոպական Յանձնաժողովի նախա-

ԴԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

21-րդ Դարում Ֆիդայական Դեժավու

ՎԱՐՐԱՍ ԱԹԱՆՍԵԱՆ

Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունները են հայ ժողովրդի ինքնապաշտպանության համար պայքարի ճանապարհին գրկանքներն անխուսափելի են, - ասում է պարտիզան զինվորականները: Ըստ հոլոթեան, պետք է ունենալ տասնհակ հազարաւոր աշխարհագորարկներ: Հակառակ դէպքում ուտոպիա է, երբ կարծում կամ ներկայացնում են, որ Ռուսկայարում հնարաւոր է դիմադրութիւն կազմակերպել՝ առանց, ասենք, Ներքին Հանդէս պահակաբազայի:

Ինչի՞ հետ գործ ունենք: Եթէ անձերից, կազմակերպութեան անունումից, այցելութիւնների եւ հանդիպումների լոկալիզացիայի վերացարկուենք, - այսօր «Մարտական եղբայրութիւն» է Տաւուշ այցելելու յայտ ներկայացնում, վաղը կարող է ստեղծուել «Գթութեան քոյրերի միութիւն» եւ Սիւնքի Տեղ կամ Խոզնավար, կամ Գեղարքունիքի Նորաբակ մեկնելու խնդիր դնել, - ապա կը ստացուի, որ հանրային խմբեր, խմբաւորումներ կան, որ գեներացնում են «համագազին դիմադրութիւն կազմակերպելու» գաղափար:

Ձինուած դիմադրութիւնը

պահանջում է նախ մարդկային, ապա՝ սպառազինութեան, հանդերձանքի, կապի եւ սանիտարական պահակութեան, տրանսպորտային, պարենի եւ այլնի անհրաժեշտ ռեսուրսներ: Ըստ հոլոթեան, պետք է ունենալ տասնհակ հազարաւոր աշխարհագորարկներ: Հակառակ դէպքում ուտոպիա է, երբ կարծում կամ ներկայացնում են, որ Ռուսկայարում հնարաւոր է դիմադրութիւն կազմակերպել՝ առանց, ասենք, Ներքին Հանդէս պահակաբազայի:

**Իսկ դեռ որքա՞ն ժամանակ է հայ ժողովուրդը ներշնչուելու, որ կամաւորական-աշխարհագորային-մարտական եղբայրութեան խմբերով եւ խմբապետներով հնարաւոր է պատերազմ շահել:**

Իսկ դեռ որքա՞ն ժամանակ է հայ ժողովուրդը ներշնչուելու, որ կամաւորական-աշխարհագորային-մարտական եղբայրութեան խմբերով եւ խմբապետներով հնարաւոր է պատերազմ շահել: Ստույգ իրավիճակի հանդէպ սթափ դատողութիւնն է գերազանց, թէ՛ լիբերալական գեղումը: Արցախի աղէտը վկայում է, փաստում է, ապացուցում է, որ աշխարհագոր խնդիր չի լուծում: Քսանուեց տարի՝ ամէն օր եւ ժամ Ատրպէյճանը նախա-

պատրաստել է դարաբաղեան երկրորդ պատերազմը, բայց երբեք հրապարակային չի յայտարարել, որ Ձեռքարկի համար պէտք է «մարտական-հայրենակցական միութիւն» ստեղծուի, մարդկանց «կալաշնիկով» ատումատ, ձեռքի գնդացի եւ նունականեո բաժանվի, մի ուսապարկ «սուխպալ» եւ ուղարկուի Պաշտպանութեան բանակի դէմ: Թշնամին ոչ միայն արդիական սպառազինութիւններ է ձեռք բերել, այլեւ կազմաւորել մարդասպանների յատուկ գործաւորաւորում, պրոֆեսիոնալ դիվերսիոն ստորաբաժանումներ: Մանրամասնութիւնները գինուորական գործի մասնագէտները կ'իմանան:

Ասում էիք, իհարկէ, չի հետեւում, թէ իշխանութիւնը պէտք է այլընտրանքային գաղափարները շէմքից մերժի եւ ընդդիմախօսներին բերման ենթարկի կամ այլ բնոյթի ճնշումներ գործադրի: Եթէ Տաւուշում «սահմանագատում է իրականացում»-ինչպէս Նիկոլ Փաշինեանն է ասում, - ապա իրաւական ի՞նչ հիմքով, դա համաձայնեցում է, հայ-ատրպէյճանական ամբողջ սահմանի վերաբերեալ կիրառուի՞ է լինելու: Ամենակցբունքայինը դա է: Եթէ պատասխան չկայ, խնդիրը պիտի քննարկուի նորից, կրկին, վերստին եւ՝ աւելի հանգամանալի: Բայց հանրային-քաղաքական դիսկուրսի այլընտրանք չպէտք է լինի նախանցեալ դարի ֆիտայական «պատերազմի» դեժավուս:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

**Ընդդիմութիւնը Արցախը, Ապա, Այսպէս Կոչուած, Ձանգեզուրի Միջանցքը «Փրկելուց» Յետոյ Անցնելու Ե Տաւուշի «Փրկութեանը»**

ՎՈՎԱ ՅԱԿՈՐԵԱՆ

Տարածուող տեղեկութիւնների համաձայն՝ ընդդիմութիւնն առաջիկայում մտադիր է վերսկսել փողոցային պայքարը. խօսքը, մասնաւորապէս, «Հայաստան» խմբակցութեան մասին է: Փողոց դուրս գալու հնարաւորութիւնը չբացառեց նաեւ «Հայաստան» խմբակցութեան ղեկավար Սեյրան Օհանեանը, յայտարարեց, թէ ընդդիմութիւնը ողջ գործիքակազմն օգտագործելու է ԱԺ-ում եւ ԱԺ-ից դուրս: Խորհրդարանական ճեպագրոյցների ժամանակ Օհանեանն ասաց, որ աշխատանքներ են տանելու իրենց համակիրների ու քաղաքացիների հետ, նաեւ, ըստ անհրաժեշտութեան, փողոցային գործողութիւնների են դիմելու:

Ընդդիմութիւնը Արցախը, ապա, այսպէս կոչուած, Ձանգեզուրի միջանցքը «փրկելուց» յետոյ անցնելու է Տաւուշի «փրկութեանը»:

«Հայաստան» խմբակցութեան ղեկավարն ասաց, որ ընդդիմադիրները պէտք է մի կողմ թողնեն իրենց մէջ առկա տարաձայնութիւններն ու պայքար սկսեն:

«Նրանց (իշխանութեանը-խմբ.) հեռացնելու պայմաններից մէկը ԱԺ-ից դուրս ժողովրդական լայն համախմբումն է, եւ կոչ կ'անէի՝ ընդդիմադիր ամբողջ հատուածը, բոլոր քաղաքական ուժերը գտնեն համագործակցութեան եզրերը, ճիշտ գնահատեն ստեղծուած իրավիճակը եւ իրենց գործունէութիւնը շարունակեն», - ասաց Սեյրան Օհանեանը:

Քաղաքագէտ, ՔԺԿ նախագահ Լեւոն Շիրինեանն ասաց, որ ընդդիմութիւնը ուղղորդուած է Ռու-

սաստանից: Նաեւ շեշտեց՝ ժողովուրդն, իհարկէ համախմբուելու է, բայց՝ իրենց դէմ: «Եթէ մէկը հակապետական է ու օտար պետութեան շահերն է պաշտպանում, ինչպէ՞ս կարող է ժողովուրդն իրենց շուրջը համախմբուել: Պատերազմից յետոյ ամենածանր օրերին եթէ ոչինչ չստացուեց իրենց մօտ, հիմա ինչպէ՞ս կարող է ստացուել: Գործ է, անում են, էլի», - ասաց Շիրինեանը:

Ըստ քաղաքագէտի՝ ինչ պատրուակով, ինչ վերնագրով ուզում է ընդդիմութիւնը կարող է դուրս գալ փողոց, բայց աջակցութիւն չի ստանալու ժողովրդի կողմից:

«Բանակը չկողոպտէին, երկիր ունենայինք, պետութիւն կառուցէին, դաշնակիրք ունենայինք, երկիրը չկողոպտէին՝ ոչինչ չեն արել: Սերժի ժամանակ ես ասում էի՝ երկիրը սարքել են գողապետութիւն: Բանակը կողոպտեցին, որը յետոյ ջախջախուեց: Իրենք էլ աշխատել են Ռուսաստանի օգտին», - ասաց քաղաքագէտը:

Շիրինեանը վստահ է՝ հայաստանեան ընդդիմութիւնը, սպասարկելով Ռուսաստանի շահը, սպասարկել է Ատրպէյճանի շահը: Հայաստանի դէմ, ըստ նրա, Ռուսաստանը կուռում է թուրքական ուժով: Անդրադառնալով Սեյրան Օհանեանի յայտարարութեանը՝ Շիրինեանն ասաց, որ նա իր համար հեղինակութիւն է: Նաեւ Օհանեանն է պատասխանատու բանակի

այս վիճակի համար ու պէտք է լուի: «Նրանք ընդդիմութիւն չեն, թաքնուած են անձեռնխմելիութեան մանդատի տակ եւ սպասարկում են Ռուսաստանի շահերը: Իսկ արտախորհրդարանական ընդդիմութիւնը համախմբուած է, ովքեր պետութեան շահերն են պաշտպանում՝ ամէն ինչ անում են պետութեան համար: Բոլորն էլ իրենց չափով օգնում են պետութեանն ու ժողովրդին: Իսկ մնացածը ընդդիմութիւն չեն», - ասաց Շիրինեանը:

ՔԺԿ ղեկավարը վստահ է՝ այդ ընդդիմութիւնը չի յաջողելու: «Հայաստանում կարող է իշխանափոխութիւն լինել ուսական արիւնտ սուխններով, ուրիշ ոչ մի կերպ: Ռուսներն էլ իրենց ծառաներին, ստրուկներին չեն խնայում՝ ուղարկում են Պաքո: Հայ ստրուկներին ուսները վերջին պահին «քցում են»: Բայց այս անգամ դա չի լինելու, որովհետեւ պետականութիւնը մենք կայացնելու ենք: Եթէ իրենք ճար ունեն, այստեղ արիւնայեղութիւն կ'անեն: Մնացածները՝ գործ է, անում են, էլի: Ի՞նչ ընդդիմութիւն դրանցից: Դրանք ոչինչ անել չեն կարող: Ինչ կարողացել են՝ արդէն արել են: Իրենց արածի արդիւնքում հայրենիքը կորցրել ենք: Ռուսները հիմա նեղ վիճակում են, կարող է այդ ուսանչիտներին վերջում ուղարկեն Դոնբաս», - ասաց Լեւոն Շիրինեանը:

«ՍԻՎԻՔ»

Յրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնետիր հոն արտայայտուող բոլոր տեսակետները

**ՄԱՍԻՍ**  
ՇԱՐԱԹ ԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ԼՈՒՐԵՐ

«Մարտական Եղբայրութեան» 49 Անդամները Ազատ Արձակուած Են



«Մարտական Եղբայրութեան» խումբ մը անդամներ

Դէպի Վերին Ոսկեպար ճանապարհ բռնած «Մարտական Եղբայրութեան» ձեռքակալուած 49 անդամները, որոնց ոստիկանութիւնը նախօրէին բաժիններ տարած էր զէնք-զինամթերք կրելու կասկածանքով, ազատ արձակուած են: Ոստիկանութեան «Ազատութեան» փոխանցեցին՝ ոեւէ մէկուն մօտ զէնք էջ յայտնաբերուած:

Ձեռքակալուածներէն մէկն ալ ՀԱԿ նախկին անդամ, «Մարտական Եղբայրութիւն» միաբանութեան ղեկավար, հրապարակաբար հրահրած էր Աբրահամեանն է, որուն կարծիքով՝ իշխանութեան նպատակը մէկն էր՝ թոյլ չտալ Երեւանին հասնիլ Տավուշ: Մինչեւ ձեռքակալութիւնները իրաւապահները յորդորած էին ձեռնպահ մնալ մարտավարական պարամունքներու նպատակով Վերին Ոսկեպար մեկնելէ:

«Մարտական Եղբայրութիւն»-ը կը պնդէ՝ նոր զիջումներու պատրաստուող իշխանութիւնները կը փորձեն հիմա ալ հեռացնել բոլոր անոնք, որոնք կը կանգնին իրենց ճանապարհին: Տէր Աբրահամեանի խօսքով՝ 44-օրեայ պատերազմէն յետոյ ստեղծուած կազմակերպութիւնը, սակայն, առաջին, անգամ չէր մարտավարական պարամունքներու կ'երթայ Տավուշ: Կ'ըսէ՝ մէկ տարիէ արդէն յատակ պայմանաւորուածութիւն ունին տեղի իշխանութիւններուն հետ: Հնչող կարծիքներուն, որ գուցէ առանձին կազմակերպութիւններու մարտավարական պարամունքները կրնան որպէս սաղրանք ընկալուիլ Ատրպէյճանի կողմէ, «Մարտական Եղբայրութիւն» միաբանութեան ղեկավարը կը հակադարձէ. «Դա անհեթեթ է, Հրանդի Ոսկեպար գնալուց Ատրպէյճանը կուի չի սկսելու: Ատրպէյճանն ու Ռուսաստանը սպասում են յարմար միջազգային իրավիճակի ոչ թէ Ոսկեպարի ուղղութեամբ, այլ որեւէ ուղղութեամբ: Էն կուի, որ իրենք չեն էլ աւարտել Հայաստանի դէմ, էս էլ է շատ կարեւոր, անընդհատ ասում են՝ պատերազմ կը սկսուի, ոչ մի վայրկեան Հայաստանի դէմ պատերազմը չի աւարտուել՝ ոչ քարոզչական, ոչ տեղեկատուական, ոչ էլ ռազմական»:

2023 Թուականը Բարդ Տարի Եր Պաշտպանութեան Նախարարութեան Եւ Զինուած Ուժերուն Համար. Պապիկեան

«ՀՀ-ի շուրջ ստեղծուած անվտանգային իրավիճակով պայմանաւորուած՝ 2023 թուականը բաւականին բարդ տարի էր ՊՆ-ի եւ ողջ զինուած ուժերի համար, տարուայ ընթացքում զօրքերը հիմնականում գտնուել են մարտական տարբեր պատրաստակամութեան աստիճաններում, իսկ կառավարման մարմիններն աշխատել են ուժեղացուած աշխատանքային կարգով: Մայիս եւ Սեպտեմբեր ամիսներին անվտանգային իրավիճակի սրման հետ կապուած զինուած ուժերը բերուել են պատրաստակամութեան տարբեր աստիճանների»:



Պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան

րութեան 2021-2026 թուականներու գործունէութեան ծրագրի կատարումը ապահովող միջոցառումներու՝ Պաշտպանութեան նախարարութեան բաժնի ցանկը կազմուած է 14 նպատակէ, որոնք կը ներառեն 37 միջոցառում. «անոնք հիմնականին մէջ կատարուած են նախատեսուած ծախսերով եւ ժամկէտերու մէջ»:

Այս մասին ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերի մշտական յանձնաժողովի Մարտ 25-ի նիստին ըսաւ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան: «2023 թուականի համար հաստատուած նախահաշիւներով տարեկան ծախսերը կազմել է 517,28 միլիարդ դրամ ֆինանսական միջոցներ, որը տարուայ ընթացքում անկախօրէն է 9,19 միլիարդ դրամով եւ կազմել 526,47 միլիարդ դրամ», յաւելեց Պապիկեան: Ըստ Պապիկեանի՝ կառավար-

ՆԳՆ-ն Մանրամասնութիւններ Յայտնած Ե Նոր Նորքի Բաժանմունք Զինուած Յարձակման Դէպքին Առնչութեամբ

Մարտ 24-ին՝ ժամը 17:00-ի սահմաններուն, նոնակներով զինուած 3 անձ մօտեցած են Ներքին գործերու նախարարութեան ոստիկանութեան Նոր Նորքի բաժնի հերթապահ մասի բաց պատուհանին, սպառնացած են ձեռքի նոնակներով պայթեցնել հերթապահ մասը:

Ոստիկանութեան ծառայողը փակած է հերթապահ մասին պատուհանը, ինչէն յետոյ սպառնալիքներ հնչեցնող անձը իր ձեռքի նոնակներէն մէկը նետած է, որուն հետեւանքով այն պայթած է ոստիկանութեան բաժնի վարչական շէնքի հերթապահ մասի մուտքի դռան դիմաց՝ իրական վտանգ ստեղծելով ոստիկանութեան ծառայողներու կեանքին եւ առողջութեան համար: Պայթումին հետեւանքով նշուած անձերէն երկուքը ոտքերէն ստացած են վնասուածքներ եւ տեղափոխուած բժշկական կեդրոն:

Երրորդ անձը՝ նոնակները ձեռքին պահած, շարունակած է սպառնալիքներ, որ կը պայթեցնէ շէնքը: Դէպքի վայր ժամանած են ՆԳՆ ոստիկանութեան տարբեր ստորաբաժանումներու ծառայողներ՝ ոստիկանութեան պետներէն գործերու նախարարի տեղակալ, ոստիկանութեան գորավար-մայր

Արամ Յովհաննիսեանի գլխաւորութեամբ, իրաւապահ այլ կառույցներու ծառայողներ:

Սկսած են բանակցութիւններ՝ նոնակները յանձնելու ուղղութեամբ եւ որոշ ժամանակ անց նոնակներով զինուած 34-ամեայ Ս.Հ.Ն ՆԳՆ ոստիկանութեան եւ ԱԱԾ ծառայողներուն կողմէ վնասագրեւորուած է: Անոր մօտ յայտնաբերուած են չորս նոնակ:

Ձեռնարկուած միջոցառումներով պարզուած է, որ նոնակը առերեւոյթ պայթեցուցած անձը 55-ամեայ Ա.Մ.Ն է: Պայթումին հետեւանքով վնասուածքներ ստացած են 55-ամեայ Ա.Մ.Ն եւ 51-ամեայ Վ.Գ.Ն, որոնք տեղափոխուած են բժշկական կեդրոն:

Նախաձեռնուած է քրէական վարույթ:

Civic.am-ի տեղեկութիւններով պայթուցիկ օգտագործողները «Սասնայ Մուկը» խմբաւորումին են: Աւելի վաղ, Մարտական եղբայրութիւնը յայտարարած էր, որ պայթումին հետ որեւէ կապ չունի. «Միաբանութիւնը ոչ մի կապ չունի կատարուածի հետ, մենք դատապարտում ենք ցանկացած տիրահաւակական գործունէութիւն, գործել եւ գործելու ենք միայն օրէնքի շրջանակներում»:

ՀՀ-ի Սէջ Որեւէ Զինուած Խմբաւորում Զի Կրնար Ըլլալ. Անդրանիկ Քոչարեան

«Ի պատիւ մեր ուժային կառույցների՝ ՆԳՆ-ի եւ Ազգային Անվտանգութեան, խնդիրը լուծարուեց, բաց դա մեզ, բնականաբար, մտածելու տեղիք է տալիս», Ազգային ժողովի Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերի մշտական յանձնաժողովի ըսաւ յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեանը՝ անդրադառնալով նախօրէին երկրին ներսը ստեղծուած տագնապալի իրավիճակին, երբ ոստիկանական բաժիններէն մէկէ ներխուժած էին զինուած մարդիկ:

Դիմելով ԱԱԾ տնօրէն Արմէն Աբաղեանին՝ Անդրանիկ Քոչարեան ըսաւ, որ փաստօրէն տուններուն մէջ դեռ շատ զէնք կայ: «Շնորհաւորում եմ մեզ երէկուայ արագ բացալայտումների համար. համոզուած են, որ ամբողջ դիշեր աշխատանք է տարուել, եւ ՀՀ-ում որեւէ զինուած ապօրինի խմբաւորում չի կարող լինել, թաքնուած զէնք չի կարող լինել. հին ասացումը կայ՝ պատից կարուած զէնքը մի օր կրակում է: Այդ կրակոցները չեն կարող մեր ներսում լինել, որովհետեւ մենք ունենք բազմաթիւ խնդիրներ, որի լուծմանը պէտք է միտուած լինենք, անվտանգային խնդիրներ, եւ մենք պէտք է ամուր գգանք մեր երկրի



Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերի մշտական յանձնաժողովի ըսաւ յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեան

ներսում», ընդգծեց Անդրանիկ Քոչարեանը եւ յաւելեց, որ գոնէ պէտք է յարգանքով վերաբերիլ «Եռաբլուր»-ին: «Այսօր մտնել եւ պահանջներ դնել պետութեան առաջ, որեւէ երկիր չի հանդուրժի: Ես համոզուած եմ, որ ամբողջ դիշեր բոլորը իրենց մաշկի վրայ գզացին, որ պէտք է սթափուեն», նշեց Անդրանիկ Քոչարեանը:

ՀՀ-ն Յանցաւորութեան Ցած Մակարդակով Տարածաշրջանի Երկիրներու Շարքին Կը Զբաղեցնէ Առաջին Տեղը. ՆԳ Նախարար

«ՆԳՆ-ի կողմից հանրութեանը մատուցուող ծառայութիւնների՝ անգամ մէկ րոպէ կանգ չի եղել», ԱԺ Պաշտպանութեան եւ Անվտանգութեան հարցերի մշտական յանձնաժողովում յայտարարեց ՆԳ նախարար Վահէ Ղազարեանը եւ յաւելեց, որ կառույցը զարգանալու է 4 յենասիւնային ուղղութիւններով՝ քրէական ոստիկանութիւն, պարեկային ծառայութիւն, ոստիկանութեան գլխաւորապէս եւ մարտնչային ոստիկանութիւն», ըսաւ ան: Անդրադառնալով պարեկային ծառայութեան յազցուածութեան՝ ներքին գործերու նախարարը ըսաւ. «Մառաչութիւնն ունի գործարանային վիճակում գտնուող 631 ինքնաշարժ»:

ԼՈՒՐԵՐ

Վրաստանի Նորանշանակ Վարչապետը Այցելեց Երեւան



Հայաստանի եւ Վրաստանի վարչապետները միատեղ մամուլի ասուլիսի ընթացքին

Անցեալ շաբթուայ ընթացքին Հայաստանի ժամանած էր Վրաստանի նորանշանակ վարչապետ Իրաքլի Գոպախիձէն:

«Վստահ եմ, որ Գոպախիձէն իր հոգատար հետեւողականութեամբ լուրջ ներդրում կ'ունենայ Հայաստանի եւ Վրաստանի յարաբերութիւնները խորացման գործում», Վրաստանի վարչապետ Իրաքլի Գոպախիձէի հետ համատեղ յայտարարութիւններու ժամանակ յայտնեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Ինչպէս նշեց ՀՀ վարչապետը, Վրաստանի վարչապետին հետ քննարկած են Վրաստանի հետ ռազմավարական հոգաբարձի գործնական իրադրոժման ուղղութեամբ անհրաժեշտ եւ հնարաւոր քայլերը: «Ուզում եմ ընդգծել, որ այդ հոգաբարձու էական առանցք է միմեանց տարածքային ամբողջականութեան եւ ինքնիշխանութեան անվերապահ ճանաչումը: Եւ այսօր մենք Վրաստանի վարչապետի հետ քննարկել ենք Հայաստանի եւ Վրաստանի միջեւ սահմանագամայն գործընթացի աշխուժացման հնարաւորութիւնները»:

«ՀՀ-ն սատարել եւ սատարում է ԵՄ-ին անդամագրուելու Վրաստանի ձգտումներին», ընդգ-

ծեց Նիկոլ Փաշինեանը:

«Մենք դարեր շարունակ համագործակցած ենք եւ եղբայրական յարաբերութիւններ ունեցած ենք, ստորագրած ենք համագործակցութեան հռչակագիր եւ աւելի բարձր մակարդակի հասցուցած ենք մեր յարաբերութիւնները: Այս հռչակագիրը հիմնուած է մեր ընդհանուր սկզբունքներուն եւ արժեհամակարգերուն վրայ», ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ համատեղ յայտարարութիւններուն ժամանակ յայտնեց Վրաստանի վարչապետ Իրաքլի Գոպախիձէն:

Վրաստանի վարչապետը նշեց, որ իր երախտագիտութիւնը արտայայտած է ՀՀ վարչապետին Վրաստանի տարածքային ամբողջականութեան ու ինքնիշխանութեան աջակցելու համար:

«Ես առանց վերապահումներու կ'աջակցիմ ՀՀ տարածքային ամբողջականութեան: Ես կը միանամ իմ գործընկերոջս առ այն, որ մեր յարաբերութիւնները յարաշարժօրէն կը զարգանան», նշեց ան եւ յոյս յայտնեց, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան համաձայնագիրը կը ստորագրուի, ու կրկին վերահաստատեց այդ գործին մէջ աջակցելու Վրաստանի պատրաստակամութիւնը:

Ատրպէյճան Մեծամորի Աթոմակայանի Հարցով Դիմած Է Հիւլէական Ուժանիւթի Գազաթափողովի Համաձայնագրահաներուն

Ատրպէյճանի քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչները Հայաստանի Մեծամորի ատոմակայանին հարցով բաց նամակով դիմած են Պրիւքսէլի մէջ մեկնարկած Հիւլէական ուժանիւթի անդրադարձիկ գազաթափողովի համաձայնագրահաններուն Պրիւքսէլի վարչապետ Ալեքսանտր տէ Գրուպին եւ Հիւլէական Ուժանիւթի Միջազգային Գործակալութեան գլխաւոր տնօրէն Ռաֆայէլ Կրոսսինին:

Ըստ ատրպէյճանական կողմին՝ անոնք գազաթափողովի դեկավարութեան կոչ ըրած են ուշադրութիւն դարձնելու, ինչպէս իրենք բնորոշած են, «վթարային վիճակի մէջ գտնուող ատոմակայանին սպառնացող համաշխարհային վտանգին» եւ Հայաստանի կառավարութեան առջեւ բարձրացնելու ատոմակայանին գործունէութիւնը անյապաղ դադարեցնելու հարցը:

«Մեծամորի ատոմակայանը,

որ կառուցուած է 1976 թուականին 9,5 աստիճան ուժգնութեամբ սէյսմիկ գոտիի մէջ, կ'աշխատի հին արհեստագիտութիւններով եւ նախատեսուած է 8 աստիճան ուժգնութեան համար: Այն մեծ միջուկային վտանգ կը ներկայացնէ Ատրպէյճանի, Թուրքիոյ, Հայաստանի եւ ամբողջ տարածաշրջանին համար», ըսուած է յայտարարութեան մէջ:

Հայաստանը բազմիցս յայտարարած է, որ աշխուժօրէն կը համագործակցի Հիւլէական Ուժանիւթի Միջազգային Գործակալութեան հետ միջուկային անվտանգութեան ապահովման հարցով՝ կատարելով իր բոլոր պարտաւորութիւնները: Այդ մասին վարչապետ Նիկոլ Փաշինեան վերահաստատեց Հիւլէական ուժանիւթի անդրադարձիկ գազաթափողովին ժամանակ նաեւ տեղեկացնելով, որ Հայաստանը կ'երկրային ատոմակայանի շահագործման ժամկէտը 2026-էն մինչեւ 2036:

Զենք Պատրաստուի Որեւէ Սէկուն Զիջելու Միջազգայնօրէն Գանչուած ՀՀ Տարածք Փաշինեան

«Ինչ ենք մենք ստանում, մենք ստանում ենք պետական սահման: Օրինականութեան հիմքերի վրայ մենք պէտք է ունենանք պետական սահման»:

Ազգային ժողովին մէջ, կառավարութեան հետ հարցուպատասխանի ժամանակ արձագանգելով «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Լեւոն Քոչարեանի հարցումին՝ կապուած Տաւուշի հատուածին մէջ զիւղերուն հետ, այս մասին ըսաւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«ՀՀ տարածքային ամբողջականութիւնը պաշտպանելը եւ վերականգնելը կառավարութեան օրակարգում է: Չեմ չորհի ասել, որ սա Հայաստանի Հանրապետութիւնն է, եւ ես ՀՀ վարչապետն եմ, եւ պայմանաւորուածութիւնը, որ արձանագրուել է միջազգային մակարդակում, այն է, որ Հայաստանը եւ Ատրպէյճանը միմեանց տարածքային ամբողջականութիւնը պէտք է ճանաչեն: ՀՀ չի պատրաստուում որեւէ մէկին զիջել միջազգայնօրէն ճանաչուած ՀՀ տարածք», նշեց վարչապետը:

Կառավարութեան հետ հարցուպատասխանի ժամանակ ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ արձագանգելով ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր

Գառնիկ Դանիէլեանի դիտարկման, թէ «լսել էր, որ կան դժբախտ ու տոբոյն քաղաքներ, լճեր ու սարեր, որ մեզ պէտք չեն, բայց չգիտէր, որ կան զիւղամիջեան ճանապարհներ, որոնք հարցականի տակ են»:

«Տանէիք այնտեղ կառուցել, Յունաստանում կղզի չառնէիք, գնալիք մի հիւրանոց էլ կառուցելիք Ոսկեպարում, երկու հատ էլ՝ Կիրանցում, էդ ճանապարհները երկայնքով կառուցելիք ձեր ավտոսալոնները: Խնդիրը տան մասին չէ, խնդիրը ՀՀ ինքնիշխան տարածքի մասին է: Այն, ինչը ՀՀ ինքնիշխան տարածքում է, ՀՀ ինքնիշխան տարածք է, կը ներէք, ես պատմական Հայաստանի վարչապետը չեմ, ես ՀՀ այսօրուայ վարչապետն եմ:

Եթէ պատմական Հայաստանի պատգամաւոր էք, առաջարկում եմ ձեր աշխատասենեակը տեղափոխել պատմական Հայաստան: Ձեր քաղաքական ուժը ունի բաւարար ֆինանսական ներուժ, գնացէք հիւրանոց, հիւրատուն կառուցէք: Ձեր հարցը աւելի շատ զգացական էր, եկէք բովանդակային քննարկենք: Մենք չենք խօսում ճանապարհը կառուցելու մասին, մենք խօսում ենք ՀՀ սահմանը սահմանազատելու մասին», նշեց Փաշինեանը:

Հոռնի Սեջ Ստորագրուած Է Հայաստան-Իտալիա Ռազմական Համագործակցութեան Տարեկան Ծրագիրը



Հայաստան եւ Իտալիոյ պաշտպանութեան Լախարարութիւններուն միջեւ կը ստորագրուի ռազմական համագործակցութեան տարեկան ծրագիր

Մարտ 19-20-ին Հոռնի մէջ տեղի ունեցած են Հայաստան-Իտալիա պաշտպանական խորհրդակցութիւններ: Հայկական պատուիրակութիւնը գլխաւորած է ՀՀ Պաշտպանութեան նախարարութեան Պաշտպանական քաղաքականութեան եւ միջազգային համագործակցութեան վարչութեան պետ Լեւոն Այվազեանը:

Խորհրդակցութիւններու ընթացքին ՀՀ ՊՆ պատուիրակութիւնը իտալիոյ պաշտպանութեան նախարարի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, պաշտպանական քաղաքականութեան պետ, զօրավար-մայրը Էնրիքօ Պարտուանիի եւ ԳՇ միջազգային համագործակցու-

թեան բաժնի պետ, զնդապետ Մաթթիա Զուզզիի հետ քննարկած է պաշտպանութեան ոլորտին մէջ Հայաստան-Իտալիա համագործակցութեան ընթացքն ու զարգացման հեռանկարները:

Լեւոն Այվազեանը ներկայացուցած է Հայաստանի շուրջ ստեղծուած անվտանգային իրավիճակը եւ գինուած ուժերուն մէջ ընթացող բարեփոխումները:

Խորհրդակցութիւններու աւարտին ստորագրուած է Հայաստան-Իտալիա ռազմական համագործակցութեան տարեկան ծրագիրը, ձեռք բերուած են շարք մը պայմանաւորուածութիւններ:

## Ուրուկուելյի Մէջ Պաշտօնապէս Բացուեցաւ Զայաստանի Դեսպանութիւնը



Ուրուկուելյի մէջ ԶԶ դեսպանութեան պաշտօնական բացման արարողութիւնը Արարատ Միրզոյեանի ներկայութեամբ

Մարտ 21-ին ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի եւ Ուրուկուելյի արտաքին գործերու նախարար Օմար Փակասինի մասնակցութեամբ կայացած է Ուրուկուելյի մէջ ՀՀ դեսպանութեան պաշտօնական բացման արարողութիւնը:

ՀՀ արտաքին գործերու նախարարին կողմէ բարձրացուած է ՀՀ դրօշը, որմէ յետոյ հնչած են Հայաստանի եւ Ուրուկուելյի պետական օրհներգերը: Միջոցառման մասնակցած են շարք մը այլ բարձրաստիճան պաշտօնեաներ, այդ շարքին՝ Ուրուկուելյի ժամանակաւոր փոխնախագահ, Գլխավոր վեհաժողովի եւ Ծերակուտականներու Պալատի նախագահի պաշտօնակատար Կրագիելա Պիանչի Փոլին, Ուրուկուելյի Ներկայացուցիչներու Պալատի նախագահ Անա Օլիվերան, Մոնթեվիտոյի մէջ հաստատման գրուած ղեկնապետական ներկայացուցչութիւններու ղեկավարներ, հասարակական-քաղաքական գործիչներ:

Նախարար Միրզոյեան իր խօսքին մէջ նշած է. «Ինձ համար մեծ երջանկութիւն եւ մեծ պատիւ է ողջունել ձեզ այսօր Ուրուկուելյում՝ Մոնթեվիտոյում՝ արդէն պաշտօնապէս Հայաստանի Հանրապետութեան այս փոքրիկ տարածքում: Ինձ համար կրկնակի եւ եռակի մեծ պատիւ եւ երջանկութիւն է բարձրացնել իմ երկրի՝

Հայաստանի Հանրապետութեան դրօշը եւ, ըստ հուշեան, պաշտօնական մեկնարկ տալ Ուրուկուելյի Արեւելեան Հանրապետութիւնում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան բացման:

«Ուզում եմ նաեւ նշել, որ մեր երկու երկրների միջեւ յարաբերութիւնները հիմնուած են երկու ժողովուրդների միջեւ երկարամեայ պատմական ջերմ յարաբերութիւնների վրայ: Աւելի քան հարիւր տարի առաջ Ուրուկուելյն սպաստան տուեց Հայոց Յեղասպանութիւնից մագապուրծ հայերին եւ դարձաւ տուն այդ հայերի համար, ինչի համար մենք իսկապէս մեր երախտիքն ենք յայտնում: Միեւնոյն ժամանակ, մենք տեսնում ենք, որ հայերը եւ նրանց սերունդները կարողացել են ունենալ զարգանալու բոլոր հնարաւորութիւնները եւ այժմ Ուրուկուելյի հասարակութեան կարեւոր, հաւատարիմ եւ բարգաւաճ հատուածն են ներկայացնում:

«Եւ հիմա ես ուզում եմ նաեւ իմ ողջոյնը փոխանցել Ուրուկուելյում հայ համայնքին եւ իմ շնորհակալութիւնը յայտնել նաեւ նրանց՝ երկու պետութիւնների միջեւ կամուրջ լինելու համար: Եւ նաեւ դրա շատ առարկայական վկայութեան համար. այս դեսպանութիւնը եւս Ուրուկուելյում հայ համայնքի պահանջով եւ ջանքերով է կեանքի կոչուել»:

երրորդ տեղերը: Ամենաերջանիկ երկիրներու տասնեակին մէջ են նաեւ Շուէտը, Իսրայէլը, Հոլանտան, Նորվեգիան, Լիբանանը, Զուիցերիան եւ Աւստրալիան:

Ամենաժգեհատ երկիր ճանչցուած է Աֆղանիստանը, որուն կը նախորդեն Լիբանանը, Լեսոթօն, Սիերա Լեօնը եւ Գոնկոյի Դեմոկրատական Հանրապետութիւնը:

Ձեկուցին հեղինակները վարկանիշը կազմելու եւ տարբեր երկիրներու մէջ երջանկութեան մակարդակը որոշելու համար հաշուի կ'առնեն քանի մը հիմնական գործօն՝ ընկերային աջակցութիւն, եկամուտ, առողջութիւն, ազատութիւն, փոստուրիստական բացակայութիւն:

Ձեկուցին հրապարակումը կը համընկնի Երջանկութեան միջազգային օրուան հետ, որ կը նշուի

## ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը Արձագանգած Է RAND-ի Զրապարակման

Օրերս ամերիկեան հեղինակաւոր «RAND» ընկերակցութիւնը իր կայքին մէջ հրապարակեց ճօ Հապլըմանի ու Փօլ Քոլմարի հեղինակած «ԱՄՆ-ն չի կրնար երաշխաւորել Հայաստանի անվտանգութիւնը՝ չնայած Ատրպէյճանի սպառնալիքներուն, բայց կրնայ օգնել» վերլուծութիւնը: ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը արձագանգած է հրապարակման:

Պատասխանելով «RAND»-ի հրապարակման մէջ տեղ գտած դրոշմներու մասին «Ամերիկայի Ջայնի» հարցումին՝ ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը յայտնած է.

«Միացեալ Նահանգները կ'աջակցի Հարաւային Կովկասի բոլոր երկիրներու շարունակական ժողովրդավարական զարգացման, ինքնիշխանութեան, անկախութեան եւ տարածքային ամբողջականութեան: Այն ամբողջ տարածաշրջանին մէջ ԱՄՆ քաղաքականութեան հիմնական սկզբունքն է, եւ այդ նպատակով է, որ կ'ընդլայնենք (մեր) ներգրաւուածութիւնը Հայաստանի հետ լայն շրջանակով յարաբերութիւններուն մէջ»:

Ամերիկեան արտաքին քաղաքական գերատեսչութիւնը ողջունած է «որեւէ բարեխիղճ ներգրաւուածութիւն, որ խաղաղութիւն եւ կայունութիւն կը բերէ Հարաւային Կովկասի ազգերուն»՝ յաւելելով.

«Ականատես եղած ենք Ռուսաստանի շարունակուող, աւերիչ յարձակման Ուքրանիոյ դէմ, վրաստանի ինքնիշխան տարածքի շարունակական բռնազաւթման եւ տարածաշրջանին ու ամբողջ աշխարհին մէջ ապակայունացնող գործողութիւններուն: Ուստի, չենք կրնար Ռուսաստանը դիտարկել որպէս վստահելի կամ բարեխիղճ դաշնակից կամ գործընկեր Հարաւային



Կովկասի մէջ կամ այլուր»:

Անդրադառնալով նաեւ Իրանին՝ Պետական Քարտուղարութիւնը ընդգծած է.

«Մենք հետեւողականորէն խրախուսած ենք այս տարածաշրջանի (Հարաւային Կովկասի) երկիրները համապարփակ գնահատել Իրանի մտադրութիւնները եւ զգուշութեամբ շարունակել Իրանեան վարչակարգին հետ կապուած բոլոր գործարքները»:

Յիշեցնենք՝ օրերս ամերիկեան հեղինակաւոր «RAND» ընկերակցութիւնը իր կայքին մէջ հրապարակած էր ճօ Հապլըմանի ու Փօլ Քոլմարի հեղինակած «ԱՄՆ-ն չի կրնար երաշխաւորել Հայաստանի անվտանգութիւնը՝ չնայած Ատրպէյճանի սպառնալիքներուն, բայց կրնայ օգնել» վերլուծութիւնը:

Վերլուծաբաններու պնդմամբ՝ Միացեալ Նահանգները պէտք է աւելի զգուշ ռազմավարութիւն վարէ՝ թէ՛ իր, թէ՛ Հայաստանի շահերէն ելլելով: Այն պէտք է Հայաստանին ապահովէ ինքզինք պաշտպանելու միջոցներով՝ միաժամանակ յստակ սկսկալիքներ դնելով իր պարտաւորութիւններու սահմաններուն վերաբերեալ:


## Զայաստանի Տնտեսական Աշխուժութեան Երկնիշ Աճ Արձանագրուած Է

2024Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐԸ 2023Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐԻ ՆԿԱՏԱՄԱՐ


Տնտեսական ակտիվութեան ցուցանիշ (SU3) 113.6%

Սպառողական գների ինդեքս (U4I) 98.7%

Համադրելի գներով, %



Ընթացիկ գներով, %



Փետրուարին Հայաստանի մէջ տնտեսական աշխուժութեան ցուցանիշը նախորդ տարուայ նոյն ամսուան համեմատ աճած է 16.3 %-ով:

Այս մասին տուեալներ հրապարակած է ՀՀ Վիճակագրական կոմիտէին:

Ամենաբարձր աճը արձանագրած է արտաքին առևտրաշրջանառութեան ոլորտը՝ 2,2 անգամ: Ներմուծումը աճած է շուրջ 80 %-ով, իսկ արտահանումը՝ շուրջ 3 անգամ: 36,4 %-ով աճած է արդիւնաբերական արտադրանքի ծաւալը, 28,3 %-ով՝ առևտրաշրջանա-

Մարտ 20-ին: Համաշխարհային երջանկութեան զեկուցը կը հրապար-

ուծութիւնը, 11,7 %-ով շինարարութեան ծաւալը, 6 %-ով՝ ծառայութիւններու ծաւալը:

Սպառողական գիներու ցուցակը նուազում արձանագրած է 1,7 %-ով, արդիւնաբերական արտադրանքին գիները՝ 0,6 %, ելեկտրականութեան արտադրութիւնը՝ 3,1 %-ով:

Ընդհանուր առմամբ այս տարուայ առաջին երկու ամիսներուն նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածին համեմատ տնտեսական աշխուժութեան ցուցանիշը աճած է 13,6 %-ով:

րակուի ամէն տարի՝ 2012 թուականէն սկսեալ:

## Երջանկութեան Ձեկուցին Զամաձայն Զայաստան Տարածաշրջանի Ամենաերջանիկ Երկիրն Է

Ամէնամեայ Երջանկութեան համաշխարհային զեկուցին մէջ (World Happiness Report) 143 պետութեան շարքին է նաեւ Հայաստանը:

Այն տարածաշրջանի երկիրներու շարքին առաջատար է եւ վարկանիշով 82-րդն է: Մեր երկրին կը յաջորդեն Վրաստանը (91), Թուրքիան (98), Իրանը (100), Ատրպէյճանը (101): Մինչդեռ Ռուսաստանը 72-րդն է:

Ըստ վարկանիշը կազմողներուն՝ այն անփոփոխ մնացած է համապարակէն յետոյ: Ֆինլանդիան եօթներորդ անգամ անընդմէջ դարձած է աշխարհի ամենաերջանիկ երկիրը: Ֆինլանտայէն բացի՝ ընկերաբանները ամենաերջանիկ երկիրներ ճանչցած են Դանիան եւ Իսլանտան, որոնք զբաղեցուցած են համապատասխանաբար երկրորդ եւ

### Սպիտակ Տան Դիրքի Կարծրացումը

Շարունակուած էջ 1-էն

տանելով աւելի քան 200 հոգիներ, որոնց մէջ երեխաներ եւ տարեց կանայք, նախագահ Պայտրոնի վարչակազմը պաշտպանեց իսրայէլի պատասխան քայլերը՝ զենք ու զինամթերք փութացուց դէպի Իսրայէլ եւ որոշեց 12 միլիարտ տոլարի օժանդակութիւն տրամադրել անոր: Երբ պատերազմը սկսաւ երկարիլ ու Կազայի բնակիչները մատնուեցան սովի, ամերիկայի ամբողջ տարածքին՝ զինադարի պահանջով ցոյցեր սկսան տեղի ունենալ, Ներկայացուցիչներու Տունէն ներս որոշ քիւով գոնկրեսականներ միացան զինադարի պահանջին եւ ամենէն կարեւորը, Միշիկըն նահանգին մէջ կայացած նախնական ընտրութիւններու նախօրեակին սկսաւ շարժում մը՝ պահանջելով որ Դեմոկրատ քուէարկողները իրենց ձայները չտան Պայտրոնին եւ փոխարէնը քուէարկեն որպէս «ոչ յանձնառու»: Այդպէս ալ եղաւ, երբ մեծ թիւով Արաբ բնակիչներ ունեցող Միշիկընի մէջ 100 հազար հոգիներ ընդառաջեցին այդ կոչին, յստակ պատգամ յղելով Պայտրոնին: Նման երեւոյթներ, թեւեւ նուազ տարողութեամբ, պարզուեցան այլ նահանգներու մէջ եւս: Միշիկընը կարեւոր նահանգներէն մին կը համարուի Ամերիկայի յաջորդ նախագահը ընտրելու առումով: 2016-ին Միշիկընի մէջ Տանուտ Թրամի յաղթած էր 11 հազար ձայնի առաւելութեամբ: 2020-ին ճօ Պայտրոն կարողացաւ շրջել այդ արդիւնքը՝ ստանալով 155 հազար աւելի ձայն:

Այժմ Պայտրոնի վարչամեքենան սկսած է աւելի խիստ ձեռով խօսիլ Իսրայէլի հետ: Ամերիկայ այժմ կը պահանջէ, որպէսզի Իսրայէլ լայնածաւալ յարձակումի չձեռնարկէ Զամասի վերջին միջնաբերդ՝ Ռաֆահ քաղաքին դէմ, ուր հաստատուած են Կազայի այլ շրջաններէն եկած միլիոնէ աւելի գաղթականներ: Նոյնիսկ Ծերակոյտի Դեմոկրատ մեծամասնութեան ղեկավար Չաք Շուսըր, որ ինք եւս Զրեայ է ու միշտ եղած է Իսրայէլի թունդ պաշտպան, հրապարակաւ պահանջեց վարչապետ Նաթանեախուի հեռացումը՝ անոր վարած ծայրայեղ քաղաքականութեան պատճառաւ:

Այս տարուան ընտրութիւն-

### Փաշինեան, Վոն Տեր Լայեն եւ Պլինքըն

Շարունակուած էջ 1-էն

զահը ՀՀ վարչապետին նաեւ տեղեկացուցած էր, որ Եւրոմիութիւնը Միացեալ Նահանգներու հետ միասին պիտի կազմակերպէ համատեղ հանդիպում Հայաստանին աջակցելու համար:

«Սա առաջին քայլն է՝ ամբարանդելու մեր երկկողմ յարաբերութիւնները Հայաստանի հետ, քանի որ Եւրոպան եւ Հայաստանը ունին երկար ու հարուստ ընդհանուր պատմութիւն, եւ եկած է ժամանակը նոր գլոբալ բանալու այդ ընդհանուր պատմութեան մէջ», ըսած էր Եւրոպական Յանձնաժողովի նախագահը:

ներուն՝ Պայտրոն վերընտրուելու համար պէտք ունի այդ «ոչ յանձնառուներու» ձայներուն: Զետեւարար, զարմանալի չէ, որ անոր վարչակազմը սկսած է կարծրացնել Իսրայէլի նկատմամբ իր դիրքորոշումը: Իսրայէլի համար կրնայ այս բոլորը անակնկալ ըլլալ, սակայն կասկածէ վեր է, որ ան կամաց-կամաց կը կորսնցնէ Ամերիկայի հանրային կարծիքը, որուն մէկ արտացոլումն է՝ քաղաքական մոր իրողութեան մը ի յայտ գալը եւ ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի վերջին որոշումը:

Գ. ԽՆՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»


### Դատախազութիւնը Վերջին 6 Ամսուան Ընթացքին ԶԶ-ին Վերադարձուցած Է 24 Միլիոն 657 Զազար ԱՄՆ Տոլարի Գոյք

Գլխաւոր Դատախազութիւնը վերջին 6 ամսուան ընթացքին Հայաստանի Հանրապետութեան վերադարձուցած է 24 միլիոն 657 հազար ԱՄՆ տոլարի գոյք:

Գլխաւոր Դատախազութիւնը երկու բացառիկ լիազօրութիւններու՝ պետական շահերու պաշտպանութեան եւ ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման շրջանակներուն մէջ, վերջին 6 ամիսներուն՝ 2023 թուականի չորրորդ եւ 2024 թուականի առաջին եռամսեակներուն (2024 թուականի Մարտ 20-ի դրութեամբ) Հայաստանի Հանրապետութեան վերադարձուցած է 9 միլիարտ 937 միլիոն դրամի (24 միլիոն 657 հազար

ԱՄՆ տոլարի) գոյք:

Պետական շահերու պաշտպանութեան գործառույթի շրջանակին մէջ՝ Մաղկաձոր համայնքին մէջ գտնուող՝ 46 միլիոն 929 հազար դրամ շուկայական արժէքին մօտարկուած կադաստրային արժէքով 24 հազար 993 քմ հանգիստի համար նախատեսուած՝ «չատուկ պահպանուող տարածք» նպատակային նշանակութեամբ հողամասը, կայացուած վերջնական դատական արձանագրութեան հիման վրայ, կառավարութեան 2024 թուականի Փետրուար 8-ի որոշմամբ՝ ամրացուած է Պետական գոյքի կառավարման կոմիտէին:



Massis Publishing Presents  
the US Premiere of


# RED

“Where there is no justice,  
every loyalty is false.”

English Subtitled, Documentary Film  
Produced and Directed by

## KADIR AKIN

Based on the book “Armenian Revolutionary  
Paramaz-Armenian Socialists and Genocide from  
Abdulhamid to Ittihat Terakki” written by Kadir Akin



Q&A Following Screening with

Film Producer & Director

## KADIR AKIN

Special Guest


## GARO PAYLAN

Former Deputy Turkish Parliament

**THURSDAY APRIL 18, 2024**  
starting 8:00pm

**AGBU VATCHE & TAMAR MANOUKIAN CULTURAL CENTER**  
2495 E Mountain St, Pasadena, CA 91104  
Free Admission, Reservation Required [info@massispost.com](mailto:info@massispost.com)

Project Advisor ALEX KEUSHKERIAN	Cameramen IMRE AZEM ONUR ZEYBEK	Montage IMRE AZEM	Sound Mixing STUDIO ISTANBUL
-------------------------------------	---------------------------------------	----------------------	---------------------------------





Sponsored by **SOCIAL DEMOCRAT HUNCHAKIAN PARTY**

### Գնահատանքի ճաշկերույթ Ի Պատիւ Փանոս Թիթիգեանի




Արեւմտեան Ամերիկայի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան շրջանային վարչութեան կազմակերպութեամբ Մարտի 22-ին, 2024, գնահատանքի արժանավայել ճաշկերույթով մը կ'ընդունէին շիրիմի պանդոկի մէջ, նշուեցաւ Տիար Փանոս Թիթիգեանի ազգանուէր երկարամեայ ծառայութիւնը: Սոյն միջոցառումին անձամբ ներկայ էին ՀԲԸՄ-ի Կեդրոնական վարչութեան շրջանաւարտ նախագահ Տիար Պերճ Սեդրակեան եւ յաջորդ նախագահ՝ Սէմ Սիմոնեան: Ներկայ էին նաեւ Արեւմտեան Թեմի

առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Գերշ. Դոկտ. Վիգէն Արք. Այգազեան, Վեր. Սերոբ Մկրտիչեան, ինչպէս նաեւ քոյր կազմակերպութեանց եւ կառուցաներու ներկայացուցիչներ, ընտանիքի անդամներ եւ հիւրեր:

Օրուան հանդիսավար ՀԲԸՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ Տիար Երուանդ Տէմիրճեան, իր բարի գալուստի եւ մեծարեալ Տիար Փանոս Թիթիգեանի ուղղուած ջերմ խօսքերով ընթացք տրուեցաւ խնամեալ յայտագրին:

Շար.ը էջ 18

### Իրաւաբան Ռուբէն Աւշարեանի Շահեկան Դասախօսութիւնը «Միջին Արեւելքը Կազախի Վերջին Իրադարձութիւններու Լոյսին Տակ»



Հ.Բ.Ը.Մ.ի Գալիֆորնիոյ շրջանի վեթերաններու վարչութիւնը անցեալ Հինգշաբթի Մարտ 2, 2021, կազմակերպած էր շահեկան բանախօսութիւն մը, որ տեղի ունեցաւ ՀԲԸ Միութեան Մանուկեան-Տէմիրճեան վարժարանի Աղաճանեան հանդիսասրահին մէջ: Օրուան նիւթն էր «Միջին Արեւելքը Կազախի Վերջին Իրադարձութիւններու Լոյսին Տակ», բանախօս՝ իրաւաբան Ռուբէն Աւշարեան:

Ընտրանի հասարակութիւն մը ներկայ էր, որոնց մէջ կը նշմարուէին Եգիպտոսի, Իսրայէլի եւ Լիպիոյ Հայաստանի նախկին դեսպան Արմէն Մելգոնեան, ինչպէս նաեւ գաղութի տարբեր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ ծանօթ ազգային եւ հասարակական գործիչներ:

Սոյն միջոցառումի հանդիսավարն էր ՀԲԸՄ-ի վեթերաններու վարչութեան ատենապետ Անդրանիկ Գարակէօզեան: Ան իր բացման խօսքին մէջ ողջունելէ ետք ներկայ հասարակութիւնը հանգամանօրէն ներկայացուց երեկոյի շարժարժան բանախօս իրաւաբան Ռուբէն Աւշարեանի համառօտ կենսագրականը, որպէս հմուտ իրաւաբան, հասարակական գործիչ, վերլուծաբան եւ երկու գիրքերու հեղինակ:

Յարգելի բանախօսը, լուսապտկերներու միջոցով, նախ համառօտ կերպով ներկայացուց Կազախի ներկայ կացութիւնը Մերձաւոր եւ Միջին Արեւելքի տնտեսական եւ քաղաքական ընդհանուր համայնապատկերն ու ռազմավարական իրավիճակը, շահագրգիռ մեծ տէրութիւններու տեսանկիւնէն դիտուած: Անոնց կիզակէտը եղած է Սուէզի ջրանցքը, Կարմիր Ծովն ու Ազգային անցքը: Ռազմավարական տեսանկիւնէն Ազգային ծոցի սկիզբը եղող գոյգ կղզիները (Թիրան ու Սարազի), կռուախնձոր եղած են Իսրայէլի, Սէնտակաւ Արաբիոյ եւ Եգիպտոսի միջեւ եւ ի վերջոյ անցած է Սէնտակաւ տիրակալութեան ներքեւ:

Արաբ-Իսրայէլեան վեց օրուան պատերազմին (1967) պատճառով Սուէզի ջրանցքը փակուած էր: Սակայն մինչ այդ 1963-ին, ԱՄՆ-ի կողմէ գաղնատրէն ծրագրուած է երկրորդ ջրանցքի մը բանալ Սուէզի գոլգահեռ: Թաքուն պահուած այս ծրագիրը՝ բացայայտօրէն հանրութեան ծանօթացուեցաւ 1994-ին: Արդարեւ այս ծրագրի իրագործումը պիտի արժէ 55 պիլիոն (միլիոն) տոլար եւ պիտի կոչուի «Պէն

Կորիոն» ջրանցք: Ի պատիւ Իսրայէլի առաջին վարչապետի անունով կոչուող այս ջրանցքի շինարարութիւնը սկսած է 2022 թուականի Նոյեմբերին եւ պիտի տեւէ 5-6 տարի: Այս մեծ ծրագրի իրագործումը կը հովանաւորուի շատ մը երկիրներու կողմէ, մասնակցութեամբ 300,000 երկրաչափերու եւ արհեստավարժ աշխատաւորներու: Ներկայիս Սուէզի ջրանցքը պետութեան համար կ'ապահովէ տարեկան 6 պիլիոն տոլարի եկամուտ: Իսկ Պէն Կորիոն ջրանցքը երբ բանելու սկսի պիտի ապահովէ տարեկան 3 պիլիոն տոլար:

Միջին Արեւելքի քաղաքաշխարհագրական ժամանակակից փոփոխութիւններն սկսած են ազդել յատկապէս քարիւղ արտադրող երկիրներուն վրայ, որոնք արդէն մեծ ներդրումներ կատարած են այս առնչութեամբ: Սեծագոյն իրագործումներէն մին է Սէնտակաւ Արաբիոյ մէջ, հիմնադրուող արդիական NEOM քաղաքը: Ան կը գտնուի Կարմիր ծովու հիւսիսը, Եգիպտոսի արեւելքը եւ Յորդանանի հարաւը, Ազգային ծոցին մօտ: Նշում քաղաքի շինարարութիւնը պիտի արժէ 500 միլիարդ տոլար: Արդարեւ աշխարհագրական կարեւոր դիրք գրաւող այս նոր քաղաքի նաւահանգիստը՝ ծրագրուած է կոչուելու աշխարհի մեծագոյնը:

Ըստ Ռուբէն Աւշարեանի Միջին Արեւելքի խաղաղ ու անդորր կեանքը վտանգուած է, ռազմատենչ ու շահամոլ երկիրներու մենատիրական նկրտումներուն պատճառով: Այս թեժ մրցապայքարէն կրնան զգալիօրէն տուժել Եգիպտոս եւ այլ երկիրներ:

Սոյն հետաքրքրական դասախօսութեան աւարտին ներկայներէն շատեր հարցումներ ուղղեցին Ռ. Աւշարեանին եւ ստացան գոհացուցիչ պատասխաններ: Անուհետեւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ մասամբ շարունակութիւնը հարց-պատասխանի օգտաւէտ խօսակցութեան:

Միջին Արեւելքի ընդհանուր համայնապատկերին դիմաց եղող այս լսարանային բանախօսութիւնը՝ շահեկան գիտելիքնորով լիքցաւորուեց ներկայ ունկնդիրները, որոնք որոշ բաւարարութեամբ մեկնեցան սրահէն, շնորհաւորելով իրաւաբան Ռուբէն Աւշարեանն ու կազմակերպիչները:

Գ. Մ.

### ՀԲԸՄ-ի Կրթնապաստներու Ծրագիրը Սկսած է Ընդունիլ 2024-2025 Տարեշրջանի Դիմումները

Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (ՀԲԸՄ) կրթնապաստներու Յանձնախումբը ուրախ է յայտարարելու, որ պիտի սկսի ընդունիլ 2024-2025 տարեշրջանի կրթնապաստներու դիմումները:

Կը քաջալերենք համալսարանական ուսանողները՝ Ապրիլ 1, 2024-էն սկսեալ ներկայացնելու իրենց դիմումագիրերը այս սպասուած առիթին համար:

Անհատական կրթնապաստներ՝ Իւրաքանչիւրը մինչեւ 2000 տոլար, պիտի յատկացուին արժանի ուսանողներու, որոնք կ'ամբողջացնեն յատուկ պայմանները : Դիմողները պէտք է ունենան հայկական ծագում, արձանագրուած ըլլան քառամեայ, օրինաւոր համալսարան Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ եւ ունենան նուազագոյնը 3.5 GPA: Դիմողները պէտք է ըլլան գործունեայ հայկական կազմակերպութիւններէ ներս եւ պատրաստ ծառայելու Հայ համայնքին:

Պայմանները լրացնող ուսանողները կրնան այցելել (<https://aebu.org/our-programs/scholarship> կայքը՝ յաւելեալ տեղեկութիւններ եւ դիմումագրեր ստանալու համար:

Դիմումները պէտք է ներկայացուին առցանց կամ նամակատան միջոցաւ մինչեւ Յունիս 30, 2024: Նամակով դիմումները պէտք է ուղարկուին՝ AEBU Scholarship Committee, 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104: Նաեւ կարելի է հեռաձայնել 626-344-7321 թիւին՝ յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար:

ՀԲԸՄ-ի նպատակն է զարգացնել ու խթանել Հայ ուսանողները, որպէսզի անոնք կատարելագործեն իրենց կարողութիւնները:

Նպաստները կը յատկացուին մրցակցային հիմունքներով եւ ստուգումներէ ետք: Կրթնապաստի արժանացած ուսանողներու անունները պիտի յայտարարուին առցանց՝ մինչեւ Օգոստոս 1, 2024: Կրթնապաստներու յանձման պաշտօնական արարողութիւնը տեղի պիտի ունենայ Օգոստոս 25, 2024-ին՝ ծնողներու եւ Միութեան բարեկամներու ներկայութեան:

Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը հիմնուած է 1969-ին խումբ մը նուիրեալներու կողմէ, որոնք հաւատացած են կարիքաւոր ուսանողներուն օգտակար դառնալու առաքելութեան: Մենք կը հաւատանք, որ ուսանողական նպաստները կարեւոր ներդրումներ են մեր երիտասարդներու կրթութեան, որպէսզի անոնք կարողանան կերտել աւելի փայլուն ապագայ մը:

Մեր ծրագիրներուն օժանդակելու համար կը խնդրենք այցելել <https://aebu.org/donate/> կայքէջը:

### Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի Ա. Ջատկուայ Պատգամը Մի՛ վախճաք

ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՀԱՆ Յ.  
ԹՈՒԹԻԿԵԱՆ

«Մի՛ վախճաք, գիտեմ որ խաչ-  
ուած Յիսուսը կը փնտռէք: Հոս չէ ան,  
որովհետեւ յարութիւն առաւ, ինչպէս  
ըսած էր: Եկէ՛ք, տեսէ՛ք այն տեղը ուր  
Տէրը դրուած էր» (Մատթ. 28. 5-6):

Իր խաչելութենէն երեք օրեր  
ետք, Կիրակի առաւօտուն, Յիսուսի  
հետեւորդ բարեպաշտ կիներ եկած  
էին իրենց վարդապետին գերեզ-  
մանը՝ հրէական սովորութեան հա-  
մաձայն, անոր անշունչ մարմինը  
օծելու ակնկալութեամբ: Յանկարծ  
զօրաւոր երկրաշարժ մը եղաւ, եւ  
Աստուծոյ հրեշտակը երկինքէն իջ-  
նելով՝ գլորեց գերեզմանի մուտ-  
քին դրուած քարը: Գերեզմանի  
պահապանները երբ ասիկա տեսան՝  
սարսափեցան: Հրեշտակը կիներ-  
րուն ըսաւ. «Դուք մի՛ վախճաք.  
գիտեմ որ խաչուած Յիսուսը կը  
փնտռէք: Հոս չէ ան, որովհետեւ  
յարութիւն առաւ»:

Չգայացունց լուր մըն էր հրեշ-  
տակին պատգամը, որ տիեզերա-  
կան տարողութիւն ունի: Հրաշալի  
դէպքեր կու գան ու կ'անցնին,  
սակայն Քրիստոսի յարութեան լու-  
րը կը մնայ, որովհետեւ այդ դէպքը  
բախտորոշ եւ ճակատագրական  
դէպք մըն է Յիսուս Քրիստոսի  
փրկագործչական առաքելութեան  
նկատմամբ: Առանց Քրիստոսի յա-  
րութեան՝ իր մահը սոսկ մարտի-  
րոսութիւն մը պիտի ըլլար: Սա-  
կայն անոր յարութեամբ ան դարձաւ  
Քրիստոսի քաւարար գորութիւնը:  
Եթէ Յիսուսի կեանքն ու քարոզու-  
թիւնը Գողգոթայի բլրան վրայ իր  
խաչելութեամբ վերջ գտնէր, այն  
ատեն Յիսուս սոսկ պատմական  
դէպք մը պիտի դառնար եւ խաչե-  
լութիւնն ալ անցեալ կատարեալ  
պատմական տխուր դէպք մը:

Պօղոս Առաքեալի համար Յի-  
սուս Քրիստոսի յարութիւնը հիմ-  
նաքարն է քրիստոնէական հաւատ-  
քին եւ քարոզութեան: Առաքեալը  
այսպէս կը գրէ. «Եթէ Քրիստոս  
յարութիւն առած չէ, ընդունայն է  
ձեր հաւատքը, ինչ որ կը նշանակէ՝  
թէ տակաւին ձեր մեղքերուն մէջ  
էք: Եթէ այդպէս է, եւ միայն այս  
կեանքին համար յոյս դրած ենք  
Քրիստոսի վրայ, մարդոց մէջ  
ամենէն խղճալիներն ենք» (Ա. Կորն.  
15. 17-19): Պօղոս Առաքեալի հա-  
յեցակէտով՝ եթէ Քրիստոս յարու-  
թիւն առած չէ, քրիստոնէայ հաւա-  
տացեալին կեանքը որեւէ մահկա-  
նացուի նման երկրաւոր սահման-  
Advertisement for Armenian Aintabtzzy Cultural Association event. Text includes: ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՍՄԱՐՏԻ 104-ԴՆ ՏԱՐԵՂԱՐՁԻ ՏՕՆԱԿՍԱՐՈՒԹԻՒՆ Գաղմկեղբայրութեամբ ԱՅՆԹԱՊԻՏԵՐՈՒ ՄԵԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՌԹԵԱՆ Գլխաւոր բանախօս ԴՈԿՏ. ՄԻԼՎԱ Ս. ԳԱՐԱՅԵԱՆ Հանդիսավար ԹԱԳՈՒՉԻ ԱՐՁՈՒՄՍԱՆԵԱՆ Գիրակի. 14 Ապրիլ 2024, կէսօրէ ետք ժամը 4-ին, Հայ Աւետ. Ե. Ե. Մերտինեան վարժարանի «Արամ եւ Անայիս Պուրդոյրճեան» սրահին մէջ 13330 Riverside Dr., Sherman Oaks, CA 91423 ԳԵՂԱՐՈՒԵՏՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ Հիւրասիրութիւն - Նրաւեր Բոլորին ARMEANIAN AINTABTZY CULTURAL ASSOCIATION Presents THE 104-TH ANNIVERSARY COMMEMORATION OF AINTAB HEROIC RESISTANCE Keynote speaker DR. SILVA S. KARAYAN Professor Emeritus Graduate School of Education Founding Director, Center of Academic Service-Learning California Lutheran University Master of Ceremony TAKOUHI ARZOUমানIAN Sunday, April 14, 2024, at 4 p.m. C. & E. Merdintan School, "Aram & Anahis Boolghoorjian" Hall 13330 Riverside Dr., Sherman Oaks, CA 91423 ARTISTIC PRESENTATION RECEPTION WILL FOLLOW - ALL ARE INVITED

# Նրա Չայնը Զնչում Է Շքեղ Ջութակի Պես... (Լուսին Ամարայի ծննդեան 100ամեակը)



## ԳԵՆԵՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Լուսին Ամարայի մասին գրուած այս յօդուածը գրուել է տաս տարի առաջ, նրա ծննդեան 90ամեակի առթիւ: Այս տարուայ ընթացքին նրա կեանքում ոչինչ չի փոխուել: Ուստի համարէք, որ այն նոր է:

Այս տարուայ Մարտ 2ին, Նիւ Եորքում, Նիւ Եորք Նահանգի եւ նրա յարակից շրջանների հարիւրի հասնող նշանաւոր երաժիշտներ, երաժշտագէտներ, արուեստագէտներ, շքեղ պայմաններում նշեցին 20րդ դարի հայագրի նշանաւոր երգչուհի, Նիւ Եորքի Մետրոպոլիտան օպերային թատրոնի զարդը հանդիսացող Լուսին Ամարայի ծննդեան 90-ամեակը: Հանրայն տարուեստագէտների շարքում է եղել նաեւ Ֆրանսահայ աշխարհահռչակ երգիչ Զնայնայ Ծարլ Ազնաւուրը:

Լուսին Ամարան Համաշխարհային համբաւ վայելող Մետրոպոլիտան օպերային թատրոնի բեմ է բարձրացել 882 ներկայացման մէջ՝ կերտելով համաշխարհային օպերային արուեստի 56 դերերգեր, որոնք մշտապէս սփռուել են ուղիւղելու եւ հեռուստատեսութեամբ:

Լուսին Ամարան աշխարհում միակ երգչուհին է, որ միեւնոյն օպերային թատրոնում երգել է աւելի քան 40 տարի, չհաշուած ռադիո-հեռուստատեսային բազմաթիւ ելոյթները, ստուդիային ձայնագրութիւններն ու մասնակցութիւնը երաժշտական ֆիլմերում:

Լուսին Ամարան գլխաւոր դերերով հանդէս է եկել Բիզէի «Կարմէն», Պուչչինիի «Չիոլլո Սոննո», «Բոհէմ», Չայկովսկու «Եվգէնի Օնեգին», Ժակ Օֆենբախի «Հոֆմանի հէքիաթները», Մոցարտի «Դոն ժուան», Լէոնկավալլոյի «Հոպարտներ», Վերդիի «Տրուբադուր», «Աիդա» օպերաներում:

Վերջին քսան տարիների ընթացքում Ամարան ղեկավարում է Նիւ ձրորգի Ֆորտ Լի քաղաքի Verismo Opera հաստատութիւնը, որտեղ նրա անմիջական հսկողութեան ներքոյ կատարելագործուած են բազմաթիւ շնորհալի երիտասարդ երգիչերգչուհիներ:

Մեծ Եղեռնը տեսած ու վերապրած, այնուհետեւ Միացեալ Նահանգներ հաստատուած ծնողների՝ Արդինէ եւ Գէորգ Արմաղանեանների դուստրն է Լուսին (Թագուհի) Արմաղանեան-Ամարան: Այն հարցին, թէ ինչ մտասեւեռման արդիւնքում է իր անուամականունը դարձել Լուսին Ամարա, երգչուհին պատասխանել է. Լուսինը՝ ձեր գիտցած լու-

սինն է, Արմաղանն ալ Նուէր ըսել է, բայց այդ բառն ալ փոխեցի ԱՄՆԱՐԱՅԻ, որը իտալերէնով անողոք, չար ըսել է:

Լուսին Ամարան ծնուել է 1924 թ. Մարտի 1ին Քենէթիքէտ նահանգի Հարդֆորդ քաղաքում: Սկզբնական երաժշտական կրթութիւնը ստացել է Սան Ֆրանցիսկոյի Համալսարանի երաժշտական դպրոցում, սկզբում դաշնամուրի, այնուհետեւ ջութակի դասարաններում, իսկ Կիրակի օրերին երգել է տեղի հայկական եկեղեցու երգչախմբում, ծանօթացել հայկական պատարագի երգեցողութեանը, հին տաղերին ու շարականներին:

Շուտով, բնութիւնից օժտուած գեղեցիկ ձայնի շնորհիւ, մանկամարդ շնորհալի երգչուհուն վստահում են մեներգեր: Ոգեւորուած հայ հաւատացեալների ոգեւորիչ գնահատականներից, այջիկա, դուն ինչ պէտք ունիս ջութակ նուագել սորվելու, դուն հրեշտակի ձայն ունիս, դուն երգելուդ նայէ... դասեր առ իտալացի մասնագէտներէ, ասում էին նրանք:

Անսալով մտերիմների եւ ազգականների խորհրդին, Լուսին Ամարան սկսում է երգեցողութեան դասեր վերցնել Արեւմուտքի Երաժշտական Ակադեմիայի պրոֆեսոր Ռիչարդ Բոնելլիի դասարանում:

Լուսին Ամարայի համար իր արտիստական կեանքի ամենայն շարժան օրը 1946 թուականի առաջին բեմէն է War Memorial Opera House-ում: Այնուհետեւ, չորս տարուայ յամառ աշխատանքից յետոյ, 1950 թուականին նա որոշում է մասնակցել Նիւ Եորքի Մետրոպոլիտան օպերային թատրոնի նորընտիր մենակատարների մրցոյթին եւ բազմաթիւ մասնակիցների միջից բախտը ժպտում է մեր հայրենակցին:

Ամարայի կողմից «Երկնային Ձայն» հատուածի կատարումը Վերդիի «Դոն Կաւլոս» օպերայից, յանձնաժողովը որակեց որպէս աննախադէպ մեկնաբանում, իսկ հոշակաւոր ջութակահար Իսահակ Ստերնը, որ գիտէր Լուսինէի հետաքրքրութիւնը ջութակի հանդէպ՝ ասաց. «Դու երգում ես շքեղ ջութակի պէս»:

Եւ այսպէս, 1950 թուականից սկսեալ սկսում է Լուսին Ամարայի փառալուծ երգչական-արտիստական գործունէութիւնը ոչ միայն Մետրոպոլիտան օպերային թատրոնի պատերից ներս, այլեւ աշխարհի ամենաշնամար օպերային թատրոններում:

Իր բազմազգազ գործունէութեան ընթացքում, Լուսին Ամարան մասնակցել է Վերդիի Ռեքուիեմի եւ Բեթհովենի իններորդ սիմֆոնիայի ձայնագրութիւններին, իտալացի հռչակաւոր երգիչ Մարիո Լանցայի հետ երգել է «Հոպարտներ» եւ «Մեծ Կարուզօ» ֆիլմերում:

Լուսին Ամարան աշխատել է այնպիսի հռչակաւոր դիրիժորներու ազգավարների հետ, որպիսիք են՝ Ջէյմս Լըլայնը, Դիմիտրի Միտրոպոլուսը, Եուլիո Օրմանդին, Լեոնարդ Բերնստայնը, Լեոպոլդ Ստոկովսկին եւ շատաւոր ուրիշներ:

Նրա խաղընկերներն են եղել Ֆրանկօ Կորելլին, Բերրի Մորելլին, Կառլօ Բերգոսցին, Նիկոլայ Գէրզան, Պլասիդօ Դոմինգոն եւ ուրիշներ:

Ինչպէս նկատեցիք, Լուսին Ամարայի խաղընկերներն առաւելապէս եղել են իտալացի երգիչներ: Պատճառը հիմնականում կայանում է նրանում, որ իտալացի երգիչները, որոնք սովորաբար տիրապետում են իտալական Bel Canto (գեղեցիկ երգեցողութիւն) ոճին, մշտապէս նախընտրում են խաղընկեր ունենալ Bel Canto երգող երգչուհիներ: Մի քանի տասնամեակ շարունակ Մետրոպոլիտան օպերային թատրոնը իր արտիստական ցանկում ունեցել է հայագրի երկու հռչակաւոր երգչուհիներ՝ յանձինս Լուսին Ամարայի եւ Լիլի Չուքասգեանի:

Լուսին Ամարան իր հզօր տաղանդի շնորհիւ կարողացաւ գրաւել աշխարհի լաւագոյն օպերային եւ համերգային բեմերը: Չափազանց մօտ ու հարագատ է նրա համար իտալական Բել Կանտօ ոճով երգելը:

Օպերային արուեստի օրրանը իտալիան է, յայտնի մի ճշմարտութիւն եւ աւելի քան յայտնի այն հանգամանքը, որ, եթէ որեւէ կատարողի ջրղողում է վայելել իտալացիների սէրն ու համակրանքը՝ նշանակում է այդ արուեստագէտը բացառիկ տաղանդի տէր է:

Բել Կանտօ ոճի բազմաթիւ երեւացող եւ չերեւացող անհրաժեշտ բաղադրատարրեր լաւագոյնս ուսումնասիրած, մի քանի տասնեակ երգիչերգչուհիների կատարումները գիշերցերեկ ունկնդրած ու իւրացրած երգչուհին, աշխարհի լաւագոյն օպերային թատրոնների վերին հորիզոնականում գտնուող Նիւ Եորքի Մետրոպոլիտան օպերային թատրոնի հայ կատարողների քառանկիւնը (Թոքատեան, Քրմոյեան, Բերբէրեան, Չուքասգեան) վեր է ածել հնգաթեւ ամրակուռ մի աստղի:

Մետրոպոլիտան օպերային թատրոնի ճակատին մեխուած այդ անկողորուն ու յաւերժ մնացուն հնգաթեւ աստղը մշտապէս փայլելու է ի պայցոյց այն իրողութեան, որ մենք՝ հայերս, որպէս աշխարհի հնագոյն աղգերից մէկը, իրաւամբ մեծ ներդրում ունենք հողագնդի մշակոյթի պատմութեան մէջ:

Այլ հարց է թէ մենք որքան շնորհակալ ենք ԱՄՆԳԻ Կ'ունենայինք գիտութեան, արուեստի եւ մշակոյթի ասպարէզներում, եթէ անզգամ թուրք չկատրէր մեր ազգի ողնաշարը՝ մտաւորականութեանը:

Ամարան այն երգչուհիներից է, որոնց համար բաւական է ունենալ գեղեցիկ ձայն, ըստ որի կարելի է գրաւել ունկնդիրհանդիսատէսին: Ոչ, այդպէս է: Օպերային արուեստը երաժշտական թատերախաղ է, թատրոն, որ իւրաքանչիւր մասնակից պարտաւոր է ցուցադրել բեմական կատարեալ խաղ՝ ինչ որ պահանջում է գրա-

մատիկ թատրոնի արտիստից:

Դերասանական փայլուն խաղի հետ մէկտեղ, Լուսին Ամարայի ձայնը հոսում է վարար գէտի պէս, հոսում՝ ծորու՛ն, երբեմն էլ առնական, երբեմն ալ՝ թախծով լի, եթերային:

Ընդհանրապէս, ցանկացած երգիչ-երգչուհու արուեստի մեծութիւնը, եւ, մանաւանդ, ձայնի ոյժը, ձայնալարերի թափն ու դրանց տատանման յաճախականութիւնը որոշուում է կատարողի մեղմ երգեցողութեամբ: Ուժեղ, գորեղ երգելը դիւրին է, մեղմ երգելն է դժուար:

Մեծ արուեստ է մեղմ երգել կարենալը: Այս ամէն մտածողութեանը լիովին համաձայն է Լուսին Ամարան, որի շնորհիւ էլ նա աներեւակայի վարպետութեամբ է կարողանում մեղմ երգել: Եւ մեղմ երգեցողութեան ընթացքում չի փոխուում նրա ձայնի տեմբրն ու գոյնը: Նրա կատարողականութեանը յատուկ են կիրթ երգեցողութիւնը եւ ձայնաձայնալի բոլոր հատուածներում տեմբրային ոչ մի փոփոխութիւն չանելը:

Իտալական Բել Կանտօ երգեցողութեան զաւակն է մեղմ երգեցողութիւնը, որի արմատները հայ երգարուեստում կարելի է գտնել մեր տաղերում, շարականներում, ժողովրդական բանահիւտութեան՝ հորովելների, ասերգերի, պանդիտութեան երգերում:

Իտալական Բել Կանտօ ոճին յարիւր՝ նրա կատարումները հիացրել են նոյնիսկ օպերայի օրրան հանդիսացող իտալիայի բազմահազար երաժշտասէրների:

Տարիներ շարունակ Մետրոպոլիտան օպերային թատրոնի թատերաշրջանը բացելու պատուին է արժանացել Լուսին Ամարան: «Մեր ժամանակի մեծագոյն լիրիկ սոպրանոն», գրել է The Times պարբերականը: Մէկ ուրիշ պարբերական (Time Magazine) գրում է. «Ամարան բերեց աչքեցուցիչ վոկալ շքեղութիւն, որը Մետրոպոլիտան օպերային տուեց հռչակ: Ամարան երկարակեաց գերասող է, բարձր կարգի վոկալ ֆենոմէն, դրամատիկ արտիստ»:

...Լուսին Ամարայի շնորհիւ Մետրոպոլիտանում յարուցուելն առաւ Մոցարտի օպերան (Նկատի ունի կոմպոզիտորի «Կախարդական սրինգ» օպերան), Ամարան Մետրոպոլիտանի պարձանքներից մէկն է, գրել է մամուլը:

Լուսին Ամարայի արտակարգ գեղեցիկ ձայնը, ճկուն, շարժուն ձայնալարերը, արտաքին փառայնղ կեցուածքը գերել են ունկնդրին նրա բազմաթիւ համերգային կատարումների ընթացքին: Համերգային յայտագրերում, օպերային յայտնի մեներգերի կողքին, արեւմտաեւրոպական կոմպոզիտորների ստեղծագործութիւններից բացի, Լուսին Ամարան մշտապէս կատարել է նաեւ հայ կոմպոզիտորների երգեր եւ ռոմանսներ:

Մեր հայրենիքի երաժշտասէրներն էլ են երկու անգամ փոթորկուն, ալեկոծ սրտով վայելել Լուսին Ամարայի կենդանի, համերգային կատարումները (1965, 1991 թ.թ.): 1965ի համերգին ես էլ եմ ներկայ եղել համերգին՝ թէ որպէս ունկնդիր, եւ թէ որպէս պատասխանատու անձ՝ անմասն երգչուհու համերգը ռադիոյով սփռելու համար: Հանդիսատեսներ իսկապէղ ծափող իրենքերի արդիւնքում Լուսին Ամարան ստիպ-

# Վաղարշակն Ալ Յայ Է...

ԴՊԿՏ. ԳՐԱՅՐ ԾԵՊԵՏԵԱՆ

Վաղարշակը ութ տարեկան պատանի մըն է: Ան ծնած է Պանկըլոր, Հնդկաստան: Վաղարշակը հնդիկ է արտաքին տեսքով, բայց էթնիկալոր, ինքնութիւնն ու փոքր տարիքին անոր համար տքնիլը արդէն ուրիշ բան է:

Պանկըլոր, Հնդկաստան, փետրուար 2024:

Մայք Ստեփանը ծնած է Պանկըլոր, անոր մայրն ու մեծ մայրը հայ են՝ ծնած կալկաթա: Մայքին մօրենական ընտանիքի արմատները եղած են Ջուղայէն, Պարսկաստան, երբ Շահ Ափաս մեծաթիւ հայեր հաստատած է հոն: Մայքին մայրը ամուսնացած է հնդիկի մը հետ եւ ընտանիք կազմած՝ Պանկըլորի մէջ: Հայրը փոքր տարիքէն լքած է ընտանիքը եւ հեռացած՝ մինակ թողելով իր հայ կողակիցը եւ երեք զաւակները:

Մայք, իր քոյրն ու եղբայրը մեծցած են իրենց մօր եւ մեծ մօր խնամքին տակ՝ հայկական շունչով: Մայք նաեւ ստացած է իր մօր մականունը՝ Ստեփան, որ ա՛լ աւելին ով գինք նոյնացուցած է հայկական ինքնութեան հետ: «Հնդկաստանի մէջ հայեր անգլիացուցին իրենց մականունները», կ'ըսէ Մայք ու կը շարունակէ. «Ասիկա ըրին, որպէսզի աւելի դիւրին ըլլան ընկերային յարաբերութիւնները եւ Ստեփանեանը դարձաւ Ստեփան»:

1981-ին Մայքը եւ իր ընտանիքը Պանկըլորէն եկած են կալկաթա, եւ հոն հայոց Մարդասիրական ձեմարանին մէջ Մայք ստացած է ուսում, նաեւ՝ հայեցի դաստիարակութիւն: «Մայրս 1955-1963 տարիներուն աշակերտած է Մարդասիրական ձեմարանին: Ես ալ հոն հայերէն սորված եմ», ըսաւ Մայք: «Հայերէնի ուսուցիչ չունէինք եւ տեղացի հնդիկ ուսուցիչ մը մեզի հայերէն կը սորվեցնէր», շարունակեց Մայք:

Հնդկաստանի հայկական գաղութի նօսրացումը չէ օգնած, որ Մայք եւ իր ընտանիքը հմտանան իրենց քիչ մը սորված հայերէնին մէջ: «Մայրս քիչ մը հայերէն կը խօսի», ըսաւ Մայք: - Ես միայն քանի մը բառեր կը յիշեմ: Կարելիութիւն չեղաւ խօսելու, եւ դժբախտաբար սորվածս ալ մոռցայ»: Մայքի դէմքին վրայ կը տեսնէի ժպիտ մը, որուն ետին նոյնքան ակներեւ էր տխրութիւնը:

Մայք Ստեփան քանի մը տեսակ աշխատանքներ ըրած է իր կեանքին ընթացքին: Ան մեծ հրճուանքով կը յիշէ իր լման ժամանակով վարչական պատասխանատուութիւն ստանձնելը Չենայի (Մատրասի) հայկական եկեղեցւոյ՝ 1994-2005 տարիներուն: «Չենա երբ կ'ապրէի, շատ կը կարդայի հայուն պատմութեան մասին», ըսաւ Մայք: - Եկեղեցիին համար գործելս մեծապէս օգնեց, որպէսզի աւելիով կառչեմ հայկական ինքնութեանս»:

Մայք 2005-ին եկած է կալկաթա եւ աշխատած է Մարդասիրական ձեմարանին մէջ, ուր շատ աւելիով առնչուած է հայ աշակերտութեան հետ, որոնք եկած էին Հայաստանէն եւ Միջին Արեւելքի կարգ մը երկիրներէ: «Մինչեւ այսօր տակաւին կ'ապրէ մէջ եմ աշակերտներուն հետ», ըսաւ ան:

Հետաքրքրական էր լսել Մայք



քի կեանքին անցած ճանապարհը եւ իր ինքնութեան փնտռումները: Չուշացաւ հարցումս. «Հնդիկ, թէ՞ հայ կը զգաս»:

«Հարիւր առ հարիւր հայ», եղաւ պատասխանը:

Մայք երախտապարտ է հայ դպրոցին ու հայ եկեղեցւոյ, անոնց մէջ կը տեսնէ հայկական ինքնութեան կերտումը եւ շարունակականութիւնը: «Հայ դպրոցը եւ եկեղեցին շատ կարեւոր դեր ունեցան հայկական ինքնութեան կերտումին մէջ», ըսաւ Մայք: ...Երախտապարտ եմ եւ անոր համար ալ ամուր կերպով փարած եմ մեր հաստատութիւններուն»:

Հայկական գաղութը Հնդկաստանի մէջ եւ պատմութեան ընթացքին՝ 16-րդ դարերէն սկսեալ, ունեցած է բարգաւաճ վիճակ: «1950-ական տարիներուն երեք հազար հայութիւններ կար: Այսօր մնացած է երկու հարիւր, որուն մօտաւորապէս եօթանասունը դպրոցի աշակերտներն են՝ եկած Հայաստանէն: Աշակերտներէն զատ՝ նաեւ ունինք քանի մը հայեր, որոնք Հայաստանէն եկած են եւ՝ տեղացիներու հետ ամուսնացած», տեղեկացուց ան:

Մայք Ստեփան չորս տարբեր առիթներով այցելած է Հայաստան: «Միժեռնակաբերդ այցելութիւնս մէջս ստեղծեց Ցեղասպանութեան ահաւորութիւնը», ըսաւ Մայք:

Ան նոյնպէս կը տազնապի Արցախի կորուստով եւ աւելի քան 120.000 հայորդիներու տեղահանութեամբ: «Շատ դժուար է ընդունիլ այս իրողութիւնը», ըսաւ ան:

Հնդկաստանի անկախութենէն ետք՝ 1947-ին, մեծ թիւով հայեր ձգած են Հնդկաստանը եւ գաղթած՝ տարբեր երկիրներ: «Աւելի լաւ ապագայ մը կ'ուզէին ունենալ», ըսաւ Մայք: Բայց Մայք եւ իր ընտանիքը մնացած են Հնդկաստան, հոն մնալուն մէջ նաեւ կայ հայ մնալու գոյապայքարը: «Չկրցայ հայ աղջկան մը հետ ամուսնանալ: Մէկը չուզեց Հնդկաստան գալ: Ստիպուած եղայ ամուսնանալ տեղացիի մը հետ», եղաւ Մայքի հայկական ուղեւորութեան մէկ այլ շղթան: Անկախ այն իրականութենէն, որ Մայքին հայրը եւ կողակիցը հնդիկներ են՝ Մայք Ստեփան գորաւոր ու տոկուն հայն է: Հայերէն չի խօսիր, բայց հեռուոր Հնդկաստանի մէջ անոր սիրտը կը տրոփէ հայութեամբ: «Յաճախ տարբեր առիթներով հայութեան մասին կը խօսիմ», ըսաւ Մայք հպարտ ժպիտով մը: - Պէտք է մեր

պատմութիւնը եւ մշակոյթը ծանօթացնել օտարներուն»:

Մայք Ստեփան իր սրտին վրայ ունի մէկ ճնշուածութիւն մը՝ անկատար առաքելութիւն մը, զոր կ'ուզէ իրականացնել:

Մայքին եղբայրը եւ քոյրը մկրտուած են հայկական եկեղեցւոյ մէջ՝ կալկաթա: Մայք ծնած է Պանկըլոր, ուր հայկական եկեղեցի չկար: Ան մկրտուած է ոչ հայկական եկեղեցւոյ մը մէջ: Ան այսօր կ'ուզէ իր ութ տարեկան զաւակը՝ Վաղարշակը, հայկական եկեղեցւոյ մէջ մկրտել: Մինչեւ օրս հայկական եկեղեցին համաձայն չէ փոքրիկ Վաղարշակը մկրտել, որովհետեւ հայրը՝ Մայքը, հայկական եկեղեցւոյ մէջ չէ մկրտուած:

«Չեմ չուսահատած: Օր մը Վաղարշակը հայ եկեղեցւոյ մէջ պիտի մկրտեմ», ըսաւ Մայք՝ հաստատ եւ վճռական:



Մայք Ստեփան կը գիտակցի, որ Հնդկաստանի մէջ հայ մնալը դիւրին չէ, եւ որ՝ ատիկա մեծ գոհողութիւններ կ'ենթադրէ: Բայց այսօր սփիւռքեան ո՞ր իրականութեան մէջ հայ մնալը դիւրին է:

Մայք իրապաշտ մարդ է: Գիտէ եւ կը տեսնէ, թէ մնացած քանի մը հայերը ինչպէ՛ս պիտի լուծուին տեղական համայնքին մէջ: «Ինչ որ ալ ըլլայ վիճակը, պիտի պահենք մեր հաւատքը եւ մշակոյթը», ըսաւ Մայք: Ան նաեւ չի մոռնար յաճախ կրկնելու եւ յիշեցնելու իր ութ տարեկան զաւակին: «Վաղարշակ հայկական անուն է,

երբեք չմոռնաս»:

Մայք ո՛չ մէկ ճիգ կը խնայէ, որպէսզի իր հայկական ինքնութիւնը պահէ հեռուոր Պանկըլորի մէջ: Ան «մէկ հոգիով հայկական բանակ» մըն է, որ կը փորձէ իր հայապահպանումի պատերազմը տանիլ՝ իր ինքնութիւնը եւ մշակոյթը պահելու համար: Ան ո՛չ միայն իր պատերազմը կը մղէ, այլ նաեւ իր ութ տարեկան զաւակին՝ Վաղարշակինն ալ:

Մայք այն հայն է, որ ամէն ինչ կ'ընէ, որպէսզի Վաղարշակն ալ հայ մեծնայ:

Չեմ գիտեր, եւ ներկայ օրերու տուեալներէն մեկնելով, ինչպէ՛ս պիտի կարենանք սփիւռքահայ իրավիճակներուն մէջ սահմանել ազգային ինքնութեան եւ անոր պատկանելիութեան բնորոշիչները եւ զանոնք կարենալ զետեղել հասարակաց ենթահողի մը վրայ: Ինչ-

պէ՞ս այդ հասարակաց ենթահողին մէջէն պիտի կարենալ բնութագրել սփիւռքահայու եւ կամ հայու դիմագիծը:

Մինչ այդ՝ հեռուոր Պանկըլորի մէջ կայ ութ տարեկան պատանի Վաղարշակը, որ կը փորձէ հայ մեծնալ: Ան այս պայքարը կը փորձէ մղել առանց հայկական դպրոցի, եկեղեցւոյ եւ շրջանակի: Կը մեծնայ առանձին՝ որպէս հայ:

Վաղարշակին մեծնալուն հետ՝ պիտի տեսնենք եւ ընդունինք, որ Վաղարշակն ալ հայ է:

Ու տակաւին՝ բոլոր իրեն նման Վաղարշակները:

**Ստացանք  
Forbidden Homeland  
(«Արգիլուած Հայրենիք»)**

**Հեղինակ՝ Քաթիա Դաւիթեան Գարակեօզեան**  
370 էջերէ բաղկացած այս հատորը կը նկարագրէ սփիւռքահայու մը պատմութիւնը, որոշ չուշագրութիւններով, ինչպէս նաեւ առնչուող տեղանուններով, քարտէսներով եւ նկարներով:



# Փասատենա քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցույ Փեթակ Շաբաթօրեայ Վարժարանը Տօնեց Յարութեան Տօնը



23 Մարտ 2024, Շաբաթ օր փասատենա քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցույ Փեթակ շաբաթօրեայ վարժարանը մեծ ցնծութեամբ տօնեց Յարութեան տօնը: Այդ օր դպրոցի սաներու, ծնողներու, եւ հիւրերու մեծ բազմութիւնը աղօթքով, երգով, խաղով ու պարով դիմաւորեցին Ս. Զատիկը:

Սպասեր էին 40 օր Փեթակ դպրոցի մէջ Ս. Յարութեան տօնը նշելու պատրաստութիւնները սկսան 40 օր առաջ՝ Բարեկենդանի շաբաթը: Դպրոցի սանիկները նախ սորվեցան, թէ ինչ պիտի տօնեն, եւ ստացան իրենց տարիքի համապատասխան, պարզունակ հոգեւոր դաստիարակութիւն: Այդ ժամանակաշրջանին աշակերտները սորվեցան նաեւ Ս. Յարութեան պատշաճ հոգեւոր երգեր, ինչպէս՝ «Սուրբ Աստուած՝ ի Յարութեան տարբերակը: Աշակերտները նաեւ սորվեցան զարնան եւ Զատիկուան նուիրուած մանկա-

եթէ մէկը ստացեր է ապրանք կամ ծառայութիւն, պէտք է որ փոխհատուցէ զայն: Հետեւաբար, պէտք է նուրիշին պարտական մնալ: Նոյնպէս, ըսաւ տէր Փեթոյեանը, մենք կեանք ստացեր ենք հայր Աստուծմէ, ապա հարցուց. ինչպէ՞ս փոխհատուցել այս պարգեւը: Աշակերտները պատասխանեցին, որ պէտք է ապրիլ Քրիստոսի հետ եւ հաւատարիմ մնալ անոր պատուիրաններուն: Ապա, դպրոցի կամաւոր օժանդակուհիներ էլէն Վարդանեանը եւ Տերեւ Տատուրեանը ընթերցեցին Զղջումի աշխարհաբար լիակատար գրուածքը, որմէ յետոյ բոլոր աշակերտները եւ ներկաները ստացան սուրբ Հաղորդութիւնը: Այդ միջոցին, դպրոցի ուսուցչուհի՝ հոգեւոր երգերու կատարող Ազնիւ Սէրայտարեանը մեներգեց Գովեա՝ Երուսաղէմը եւ այլ շարականներ:

Զատիկը ոսոտստելով եկաւ Օրուան աշխարհիկ բաժինը տեղի ունեցաւ եկեղեցապատկան համալիրի Տունայեանց սրահի մէջ:



կան, աշխարհիկ երգեր: Իսկ դպրոցի երկու օգնական պատանուհիները սերտեցին Զղջումի (խոստովանանք) աշխարհաբար հայերէն լիակատար ընթերցանութիւնը:

Հաղորդութեան ֆրիստոսի հետ

Տօնակատարութեան հոգեւոր բաժինը տեղի ունեցաւ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցույ մէջ: Աշակերտները վառեցին մոմեր, բեմի վրայ ոգեւորութեամբ երգեցին իրենց պատրաստած հոգեւոր երգերը, ապա ամբողջ սրահը միաբերան երգեց Տէրունական աղօթքը: Եկեղեցույ հոգեւոր հովիւ Սարգիս աւագ քահանայ Փեթոյեանը տուաւ իր բանադակն պատկերաւոր, դիւրըմբռնելի պատգամը: Ան աշակերտներուն բացատրեց, թէ

Մանկապարտէզի սանիկները իրենց ուսուցչուհի Անի Մարսէլեանի առաջնորդութեամբ երգեցին զարնան եւ Զատիկուան նուիրուած մանկական գուարթ երգեր եւ արտասանեցին ոտանաւորներ: Ապա, ոսոտստելով եւ պարելով սրահ մտաւ զարնան ջերմ օրերը աւետող յնապաստակ քօլորիկը՝ բոլորին ծիծաղեցնելով եւ զարմանք պատճառելով: Այս համակրելի հիւրը աշակերտներուն բաժնեց գոյնզգոյն հաւկիթներ, պարեց անոնց հետ եւ հրաւիրեց որ անոնք իր գիրկը նստած լուսանկարուին:

Յայտագիրը ավարտեցաւ ընտանեկան սիրալիկ գրոյցներով, որ տեղի կ'ունենար ծնողներու կողմէ նուիրաբերուած ախորժաբեր սեղանի շուրջ:

# Սուրբ Յարութեան Աւետիսը Քառասնօրեայ Երեւումները Ովսանմաներ - Կենսատու Սուրբ Խաչ - Լոյս Գերեզման

Քրիստոսի Յարութեան ավետիսը սոսկ հաւատքի արդիւնք չեղաւ, այլ Յարուցեալ Փրկչին քառասնօրեայ երեւումներով հաստատուած իրողութիւն մը:

## ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Սուրբ Զատիկի Աւագ Շաբաթն է այսօր եւ քրիստոնեայ աշխարհը կ'ապրի Յարութեան մշտնջենական ավետիսով՝ Քրիստոս Յարեալի Մեռելոց: Ճանապարհ մը Մեծ Պահոց ընթացքով ստուերուն, Արեւազալով լուսատու, Ծաղկազարդի ովսանմաներով դրոզիւն, Երուսաղէմ մուտք՝ վերջին սաստեղու ուժգնութեամբ, խորհրդաւոր վերջին Ընթրիքով, հասնելու համար Խաչ եւ Գերեզման, ու անկէ քառասնօրեայ Յարութեան իսկական ներկայութեամբ, իսկական երեւումներով:

Աւետարանները կը հաստատեն որ Յարութեան ավետիսը պատմութեան մէջ Բեթղէհէմի Մանուկը, Փրկիչ ծնած նոյն ինքն Աստուածորդին եղաւ, այս անգամ լոյս գերեզմանէն վերակենդանացած ներկայութիւն մը առաքեալներուն աչքին: Առ հասարակ այն տպաւորութիւնը կը ստացուի թէ Փրկիչը գերեզմանէն յարութիւն առնելով ուղղակի բարձրացաւ առ Հայր, ինչպէս սրբապատկերներու ետին թաքուն կը տեսնենք:

Զմոռնանք առաջին քառասուն օրերը երբ Յարուցեալ Փրկիչը մնաց երկրի վրայ, միայն իր գերեզմանէն դուրս գալով եւ իրենները փնտռելով ու անոնց հետ մնալով: Զատիկը կենսատու, կեանք պարգեւող տօնն է գերեզմանէն անդին, որ եղաւ լրումը Քրիստոսի սուրբ առաքելութեան, ոչ թէ վերջ մը, այլ մանաւանդ մշտնջենի կեանք՝ սկսած Բեթղէհէմէն: Աւետարանական իւրաքանչեւ տուեալներով Յարուցեալ Քրիստոս քառասուն օրեր երեւցաւ նախ գերեզման փութացող կիներուն, ապա Երուսաղէմի վերնատան մէջ ակնկառուց սպասող առաքեալներուն, եւ պատեհութեամբ մըն ալ Երուսաղէմէն էմմաուս ոտքով ճամբորդող զոյգ մը մարդոց միանալով, մին կ'դէտվպաս անուն եւ միւսը անծանօթ, որոնց այս ԱՆԾԱՆԹԸ եղաւ երրորդ ուղեկիցը մինչեւ անոնց տունը ուր հասան եւ հիւրասիրուեցաւ:

Երկուքը կը խօսէին Փրկչին գլխուն եկած փորձանքներուն մասին, ու երրորդը մտիկ կ'ընէր, նոյնիսկ յորդորական մըն ալ լսելով թէ «դու՞ն մնացիր չգիտցողը թէ ինչ պատահեցաւ Երուսաղէմի մէջ», մինչեւ որ տուն հասան ուր սեղանը օրհնեց ու յայտնեց ինքզինքը:

Յարութեան առաւօտուն իսկ երբ Մարիամ Մագդաղենացի «եւ միւս Մարիամը» գերեզման գացեր էին, մեծ զարմացումով գերեզմանը փակող մեծ քարը մէկդի գլորուած տեսան ուր Յիսուսի մարմինը չկար: Վախցան անշուշտ: Գերեզմանի պարտէզին մէջ



մարդ մը տեսան պարտիզպանը խորհելով հարցուցին եթէ Տիրոջ մարմինը վերցուցած էին գերեզմանէն: «Մարիամ» ըսելով առաջին հրաշքը տեղի կ'ունենար, երբ «մի՛ լաք, մի՛ ողբաք» կ'ըսէր կարծեցեալը: Յարուցեալ Քրիստոսն էր կանգնած կիներուն դէմ: Տօնական օրերու մեր շարականներէն մին պատկերաւոր կ'երգէ յարութեան ավետիսը տալով՝

Այսօր վիմին հաւատոյ եւ Յովհաննու սիրելոյ

Ընդ հակառակս ընթացեալ պատմէին աշակերտացն ասելով Յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն

Հաւատքի վէմը Պետրոս Առաքեալն է, իսկ Յովհաննէսը Յիսուսի սիրած աշակերտը: Երբ լսեցին իրարանցումը, հակառակ ուղղութեամբ վազեցին, մին դէպի գերեզման, միւսը՝ գերեզմանէն վերնատուն, անհաւատալին ստուգապէս փոխանցելու համար հոն սպասող առաքեալներուն ու անոնց հետեւորդներուն: Թովմաս առաքեալ բացակայ էր ու չհաւատաց, եւ սակայն Յարուցեալ Քրիստոս կանչեց զինք իր մօտ եւ ցոյց տուաւ ձեռքերուն եւ ոտներուն վէրքերը: Թովմաս ցնցուած՝ «տեսաւ ու հաւատաց»:

Սուրբ Յարութեան պատգամը Փրկչին մնացուն ներկայութիւնը եղաւ քրիստոնեայ աշխարհին ճիշդ այնպէս ինչպէս այդ քառասուն օրերուն երբ անհաւատն ու երկմիտը տեսան, շօշափեցին Տիրոջ ձեռներն ու ոտները: Իսկ Ներսէս Շնորհալի Հայրապետ մէկ այլ շարականով երգեց՝ «ձեռք ընդ ձեռաց ոտք ընդ ոտից ընթանալեաց», այս անգամ հաւատքէն ուղղակի գործի հրաւիրելով գմեղ, խաչին վրայ գամուած ձեռքերուն եւ ոտներուն ԸՆԴ (փոխարէն) անոնց տէրը դառնալ ու անոնց գործը շարունակել ընթանալեաց, այսինքն քալելով եւ ոչ ձեռնածալ մնալով, իր Սուրբ Եկեղեցիին միջոցաւ:

Փեթակ դպրոցի աշակերտները այժմ կը պատրաստուին Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման, Համբարձման տօնին եւ տարեվերջի հանդէսին:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցույ Փեթակ շաբաթօրեայ դպրոցը 4-14 տարեկան հայտնիներուն կու տայ հայցի դաստիարակու-

թիւն, թէ՛ կը սորվեցնէ հայոց լեզուն եւ թէ՛ ազգային եւ հոգեւոր ձեռնարկներու միջոցով կը կերտէ հայկական ինքնութիւն: Դպրոցի արձանագրութիւնը միշտ բաց է: Պատգամ ձգել՝ 1626 660 9443, գ ր ե լ stgregorysaturdayschool@gmail.com (Հաղորդագրութիւն՝ դպրոցէն)

# Գնահատանքի ճաշկերույթ Ի Պատիւ

Շարունակուած էջ 7-էն

Սրտի ջերմ խօսքերով ելույթ ունեցաւ Գերշ. Տ. Յովնան Սրբազան եւ բարձր գնահատեց յօբելիար փանոս թիթիգեանի երկնատուր առաքիլներէն: Այնուհետեւ փանոս թիթիգեանի արժանիքներու մասին հիացումով արտայայտուեցաւ ՀԲԸՄ-ի նախագահ՝ Տիար Պերճ Սեդրակեան եւ ընդծեց որ յօբելեարը՝ տարիներ շարունակ, եղած է ազգային եւ միութեանական հարցերու իր բանիմաց խորհրդականը:

Ճաշի սպասարկութեանէն ետք գործադրուեցաւ զեղարուեստական ճոխ յայտագիր մը, մասնակցութեամբ ՀԲԸՄ-ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարանի (պարախումբ), Միշէլ Գոգման (ասմունք) Heritage Quartet (Քառեակ-նուակ):

Սրտաբուխ խօսքերով եւ գնահատանքի բարձր արտայայտութիւններով հանդէս եկան Գերշ. Դոկտ. Վիգէն Արք. Այգազեան, իրաւաբան Կարօ Ղազարեան եւ Արթուր Համալեան, որոնք գրուատանքով արտայայտուեցան յօբելեար Տիար Փանոս թիթիգեանի առաքիլներէն, հանրաճանաչուեցաւ զանազան թիթիգեանի առաքիլներէն, հանրաճանաչուեցաւ զանազան թիթիգեանի առաքիլներէն, հանրաճանաչուեցաւ զանազան թիթիգեանի առաքիլներէն: Արդարեւ, յօբելեարը մեծ նախաձախդրութեամբ եւ հետեւողական յամառ աշխատանքով, ազգային միասնականութեան պահպանման ջանքերով եղած է:

# Շահբագեան Բարեգործական Զինմարտ

Շարունակուած էջ 13-էն

Կրթական նախաձեռնութիւնները հեռուոր գիւղերում փոխակերպում է համայնքները եւ կերտում փայլուն եւ հզոր ապագայ: Նրանց ստրատեգիական ներդրումների միջոցով քանդուած են խոչընդոտները եւ բացուած իւրաքանչիւր երեխայի ներուժը, գիւղ առ գիւղ:

Հիմնադրամը վերջին տասը տարուամ ծախսել է շուրջ հինգ հարիւր հազար ԱՄՆ Դոլար իրենց ծրագրերի համար: Շահբագեանի հիմնադրամը, ապագային նայելով, յանձնառու է շարունակել իր ջանքերը կրթական բարեփոխումների ուղղութեամբ: Քանի որ հիմնադրամը նշում է իր տասնամեակը 2024 թուականին, նրանք ծրագրել են առաջիկայ հինգ տարիների համար յատկացնել մէկ միլիոն ԱՄՆ Դոլար բիւջէ՝ Հայաստանի Գեղարքունիքի մարզի դպրոցների բնագիտական ուսումնական պլանի բարեփոխման համար: Այս նախաձեռնութիւնը

պանման ջատագով եղած է:

Տիար Հրայ Սեփեթեան հանգամանօրէն ներկայացուց փանոս թիթիգեանի նոր հրատարակած գիրքը՝ «Պատկերին Միւս Երեսը» որ իր մէջ կը պարբազէ յուշագրութիւն, ազգային, քաղաքական, հասարակական գործունէութեան նուիրուած կեանքը: Ան գնահատեց եւ արժեւորեց ճոխ բովանդակութիւնը, միաժամանակ նշեց որ շատագրական սխալներ:

98 ամեայ յօբելեար՝ Տիար Փանոս թիթիգեան սաշակով բեմ յառաջացաւ եւ յոտնկայ ծափահարութիւններով ողջունուեցաւ ներկայից կողմէ: Ան իր շնորհակալութիւնները յայտնեց ՀԲԸՄ-ի ղեկավարութեան եւ սոցիալական կազմակերպիչներուն ու մասնակիցներուն: Երիտասարդական աւելնով՝ արտայայտուելով հայութեան ապագայի մասին իր լաւատեսութիւնը յայտնեց, յատկապէս արհեստագիտութեան (թէքնոլոգի) մարզին մէջ յառաջընթացի մասին, ապա յարեց «հայ ժողովուրդը քու փրկութիւնդ քու հաւաքական ոյժիդ մէջ է»:

Սոցիալ յիշարժան երեկոն իր աւարտին հասաւ վեր. Սերոբ Մկրտիչեանի խրախուսիչ խօսքերով ու փակման աղօթքով:

Ներկայները սրահէն բաժնուեցան վեթերան ազգային մը պատուած ըլլալով գոհունակութեամբ:

«Պատիւս արժանաւորաց»:

Նպատակ ունի բարձրացնելու գիտական կրթութեան որակն ու համապատասխանութիւնը՝ աշակերտներին ամուր հիմք տալով ապագա աղեմիտական եւ մասնագիտական հետապնդումների համար: Հիմնադրամի ջանքերը խորապէս կ'ազդեն տարածաշրջանի աշակերտների կեանքի վրայ՝ նրանց տրամադրելով ժամանակակից աշխարհում յաջողութեան հասնելու համար անհրաժեշտ գործիքներ: Շահբագեանի հիմնադրամը հարկերից ազատուած 501 (c) (3) շահօյթ չհետապնդող կազմակերպութիւն է եւ գրանցուած է ԱՄՆ-ի Մասաչուսէթս նահանգում:

Շահբագեանի հիմնադրամին կարելի է հետեւել, աջակցել, համագործակցել, սովորել, ներգրաւել, պաշտպանել եւ մեծարել հետեւեալ կայքերով.

Facebook: Shahbazian Foundation and Shahbazian Foundations

LinkedIn: Shahbazian Foundation

# Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի

Շարունակուած էջ 8-էն

Թեմը ընդգծեց կիրակնօրեայ վարժարաններուն համար պատրաստուած ծրագրի գործադրութիւնը:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի հոգեւորականաց Ընդհանուր Ժողովի ընթացքին մասնաւորաբար քննարկուեցան երիտասարդութեան, տիկնանց մարմիններուն, ամուսնային ճամբարներուն, Հայաստան ուխտագնացութեան, խնամատարական մարմին, սարկաւազներու պատրաստութեան, խոկումի յանձնարարներն եւ հաղորդակցութեան գրասենեակի վերաբերեալ օրակարգային նիւթեր: Բնականաբար, մասնաւոր կերպով շեշտուեցաւ Նոյնմբեր ամսուն միւստօրհանութեան եւ Մայր Տաճարի վերածման աւթիւ դէպի Հայաստան կատարուելիք ուխտագնացութեան նախապատրաստուելու կարեւորութիւնը: Տակաւին ժողովը քննարկեց ծիսական ու հովուական հարցեր, եկեղեցիներու անդամակցութեան ընդարձակումը, ծխական կեանքի առաւել խորքային կազմակերպումը, Առաջնորդարան եւ ծուխեր սերտ համագործակցութիւնը,

Առաջնորդարանի տեղեկատուութեան, համացանցային ու գրաւոր լրատուամիջոցներուն մասնաւոր տեղ տալը:

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմը, գլխաւորութեամբ Առաջնորդ Սրբազան հօր եւ համագործակցութեամբ հոգեւոր դասուն ու ժողովականութեան, յառաջիկայ շրջանին եւս, նոյն նուիրումով, պարտաճանաչութեամբ, պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ պիտի շարունակէ Աւետարանի բարի սերմերը ցանել մեր նոր սերունդի գաւակներու հոգու մէջ, առաւել եւս զարկ տալ եկեղեցական ծիսական արարողութեանց, ծուխերէն ներս աստուածաշնչական սերտողութեանց, երիտասարդութեան լայն գանգուածի մասնակցութեան, քահանայութեան նոր թեկնածուներու քաջալերման, կանանց ներկայութեան ու մասնակցութեան, աշակրջութեամբ նոր դպիրներ ու սարկաւազներ պատրաստելու առաքելութեան:

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի հոգեւորականաց Ընդհանուր Ժողովը փակուեցաւ Սրբազան հօր աղօթքով:

# Թեմերսի Ուկրաինա

Շարունակուած էջ 14-էն

Քաղցրեղէն - Պատմութեամբ ներուր Գիրք մը» (1954), «Ամուսնային խաղի մը Երեք Խաղողները եւ Այլ Պատմութեամբներ» (1960), «Ասպետավայել Հարցը - Վիպակ մը եւ Չորս Կարճ Պատմութեամբներ» (1966), «Մէկ Բազուկ եւ Ուրիշ Պատմութեամբներ» (1967), «Մահկանացու Ութ Կիներ Տիրացան □ Պատմութեամբներու Գիրք մը» (1974), «Վրանի ճճիներ» (1980), «Պատահեցաւ Արեւածագի Օր մը եւ Այլ Պատմութեամբներ» (1981) եւ ուրիշներ: Վերջապէս երկու քերթողագիրքեր՝ «Քաղաքներու Չմեռը» (1956) եւ «Որձեւէզ, Իմ Սէր» (1977):

1936-ին, Սէն Լուիսի մէջ՝ «Ուաշինկիթըն» համալսարանէն ներս գտնուած շրջանին լոյս կ'ընծայէ «Me Vashya» թատերախաղը. յաջորդ տարի՝ «Գարնան Փոթորիկ»ը: Իբրեւ թատերագիր խօսելով իր անդրանիկ բխումներուն մասին եւ ակնարկելով վաղ տարիներու իր արարումներուն, յատկապէս «Գահիրէ, Շանկհայ, Պոմպէյ» թատերախաղին՝ Ուկրաինայի գրած է. «Խնդուք... դիւթեց գիս: Յետոյ, հոն, թատրոնն ու ես քով-քովի իրար գտանք, թէ՛ աւելի վատ եւ թէ՛ աւելի լաւ բանի համար: Գիտե՛մ, որ թատրոնը միա՛կ կենսատու բանն է, որ փրկեց կեանքս...»:

Բ. Աշխարհամարտի որոտներու վաղորդայինն եւ օժանդակութեամբ իր գործընկեր Օտրի Ուուտին, «Ռոքֆելլըր» հիմնարկը Ուկրաինային շնորհեց 1000 ամ. տոլար՝ անոր «Հրեշտակներու Ծաղկատամարտը» թատերախաղին համար: Օգտուելով իրեն տրուած պարգեւով՝ Ուկրաինայ կ'ուղղուի Նիւ Օրլէան, շնորհակալագիր յանձնելու «Works Progress Administration»-ին, որ հիմնուած էր ԱՄՆ-ի նախկին նախագահներէն Ֆրանքլին Ռուզվելթի նախաձեռնութեամբ, նպատակ ունենալով օժանդակել արուեստագէտները, գրողներն ու

երաժիշտները՝ անոնց տալու վերապրելու կամք ու զօրութիւն:

Երկար է շարքը մրցանակներու՝ շնորհուած Թեմերսի Ուկրաինայի մանաւանդ թատերագիրին «Ապակեայ Գառազեղը», «Ցանկութիւն Կոչուող Հանրականութիւն» (1969) «Կատուն՝ Տաք Թիթիգեալ Տանիքին Վրայ» թատերախաղերուն համար: Մրցանակատուցութիւններու գծով յայտնենք, թէ ԱՄՆ-ի 39-րդ նախագահ ձիմի Քարթեր (1 Հոկտեմբեր 1924-ին կը բոլորէ իր ծննդեան 100-ամեակը), 1980-ին մեծ թատերագիրին շնորհած էր նախագահական «Ազատութիւն» (Liberty) մետալը: Իմաստասէր Ուկրաինայ մետալը ստացած պահուն հետեւեալն էր արտասանած. «Անպատասխան մնացած հարցում մըն է կեանքը, բայց հաւատանք հարցումին պատիւին ու կարեւորութեան: Իսկ ինչո՞ւ ես եղած եմ գրող, որովհետեւ կեանքը գտած եմ անգոհացուցիչ»: Ահաւասի՛կ փիլիսոփայ Ուկրաինայի բազմաթիւ գոհար խօսքերէն մէկը:

Արդարեւ, Թեմերսի Ուկրաինայ հայելին իսկ է իր զբոթէ բոլոր գործերուն, իր տառապակոծ կեանքին՝ իր դժխեմ նսեհին ընդմէջէն: Իր գործերը՝ ոսկեցուլուն հայելին իր նկարագրին, վարքին, կենցաղին, հօր պատգամներ կը հնչեցնեն աչօր ալ ու պիտի շարունակեն հնչեցնել դարեր, աշխարհի հասարակարգերու մէջ Ամանտաներու, Թոմերու, Ռոզերու, էտուինաներու, Քոուելիւսներու, Պլանշ Տիւ Պուաներու, Քուրլըքիներու անվերջանալի այն բանակներով, որոնց ուղղած էր մեծատաղանդ գրողը իր «անպատասխան մնացած հարցումը»: Ան մաքառեցաւ այն անողորմ ճակատագիրին դէմ, որ ո'չ միայն իրը եղաւ, այլ՝ միլիոնաւոր մարդոց, իր ստեղծած կերպարներուն անմար ու ժականութեամբ ներկայացուելու համաշխարհային բեմերու վրայ:

«Ալթամար»

**ՅԱՒԱԿՑԱԿԱՆ**  
ԳէՈՐԳ ԹԱՒՈՒՔՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով, Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրօյլեաններ իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի աչրիին՝ Տիկ. Մարալին եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:  
Առ այդ \$200 կը նուիրեն «Մասիս»ին:

**ՅԱՒԱԿՑԱԿԱՆ**  
ՄՈՒՐԱՏ ՊՕՅԱՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով մեր խորագգաց ցաւակցութիւնը կը յայտնենք հանգուցեալի աչրիին՝ Տիկ. Զապէլին, եղբօր՝ Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիւզան Պօյաճեաններուն եւ ընտանեկան պարագաներուն:  
«Մասիս»

### Կլենտրլի Նոր Համալիրը

Շարունակուած էջ 13-էն

լուծեան մէջ առանձին չէ, այլ շատեր կու գան միանալու եւ գործնապէս մասնակցելու Կլենտրլի հայաստան շրջանի համար կենսական կարեւորութիւն ունեցող նոր եւ ինքնուրոյն եկեղեցի եւ յարակից ամենօրեայ վարժարան մը ունենալու երազանքի իրականացման: Համաձայն Տէր Մանուկին, բոլոր բարերարներուն մասնակցութիւնը վկայութիւն մըն է սիրոյ ուժի եւ միասնականութեան, ոգեշնչող երեւոյթ մը անոնց մարդասիրութեան, ազգասիրութեան եւ եկեղեցասիրութեան: Տէր Հայրը շնորհակալութիւն յայտնելով բոլոր ներկաներուն, յայտնեց, թէ բոլորի ջանքերով Կլենտրլի եկեղեցւոյ եւ վարժարանի ծրագրի իրականացումը յաղթանակի եւ հպարտութեան առիթ պիտի հանդիսանայ իւրաքանչիւր հայու համար: Մայր Թերեզայի խօսքերէն մէջբերում կատարելով Տէր Հայրը իր խօսքը փակեց, լիջեցնելով, թէ՛ կարեւոր չէ որքան կու տանք, այլ՝ որքան սէր կու տանք մեր շրջապատին:

Հաւաքոյթի ընթացքին յաջորդաբար խօսք առին Թեմական Խորհուրդի ատենապետ՝ Տիար Վարդան Նազիրեան եւ համալիրի ճարտարապետ՝ Տիար Արամ Ալաճաճեան: Ապա ներկաները ժապաւէնի ճամբով դիտեցին, ապրեցան եւ զգացին համալիրի շքեղութիւնն ու կարեւորութիւնը: Համալիրը իր ամբողջութեամբ հարուստ է երկնասլաց գմբէթներով, գեղակերտ զանգակատունով, խաչերով զարդարուն հոյակերտ ցանկապատերով, սլացիք բացօթեայ խորանով եւ կանաչապատ ընդարձակ բակով, իսկ եկեղեցին ու վարժարանը օժտուած են ներքին բաժանումներով, բազմանպատակ յարմարութիւններով ու արդիական սարքաւորումներով: Համալիրը իր ամբողջութեամբ թէ՛ դիրքի եւ թէ՛ վայրի առաւելութիւններով բոլորի ուշադրութիւնը պիտի գրաւէ եւ բերկրանքով պիտի լեցնէ բոլորի հոգիները, իբրեւ խորհրդանիշն ու ամբողջ մեր հաւատքին, մշակոյթի եւ ինքնութեան, բաբախող սիրտը հանդիսանալով Կլենտրլի հայութեան:

Աւարտին իր սրտի խօսքը փոխանցեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Յովնան Արք. Տէրտէրեան, որ նախ մէջբերում մը կատարելով Վահան Թէքէ-

եանի «Եկեղեցին Հայկական» բանաստեղծութենէն, ներկաներուն յայտնեց, որ ձեռնարկը կը միտի իրագրել պահել հաւատաւոր ժողովուրդը Կլենտրլի հայութեան ի նպաստ այն աշխատանքի մասին, «որուն գլխաւոր նպատակն է ստեղծել հնարաւոր միջոցները՝ ծաւալելու ու զարգացնելու համար եւ՛ եկեղեցական կեանք, եւ՛ դպրոցական առաքելութիւնը, եւ՛ տակաւին համայնքի համար օգտաշատ այլ ծառայութիւններ»: Սրբազանը իր խօսքը շարունակեց ըսելով, թէ՛ եկեղեցական նոր համալիրը «արդէն իսկ իր դռները կը բանայ լիարժէք կերպով իր ծառայութիւնը շարունակելու Կլենտրլի քաղաքի մէջ, որպէս կարեւորագոյն համալիր Արեւմտեան Թեմի սահմաններէն ներս»: Սրբազանը բացատրեց, թէ եկեղեցի ու դպրոց կը կառուցենք, «որպէսզի մեր էութեանը մէջ նորոգենք տեսիլքը՝ եկեղեցւոյ առաքելութեան եւ տեսլիքը՝ հայ դպրոցին, որոնք կը ներկայացնենք մէկ եւ անբաժանելի ամբողջութիւն մը»:

Սրբազանը մասնաւոր անդրադարձ կատարեց սփիւռքի մէջ մեր հոգեւմտաւոր արժէքները բարձր պահելու հրամայականին: Ան ըսաւ. «Հայրենիքէն դուրս սփիւռքը իրականութիւն մըն է, եւ այն եղած է իրականութիւն մը գրեթէ բոլոր ժամանակներուն: Այսօր, սակայն, սփիւռքը իր սահմանները ընդարձակած է, եւ այն ամուր պահելու պարտականութիւնը ունինք ի սէր Մայր Հայրենիքի ու Ս. Էջմիածնի»: Սրբազանը ընդգծեց հայ եկեղեցիէն ու վարժարանէն ներս հայ պատանիին մէջ հայ քրիստոնեայ նկարագրի կերտումի պահանջը, առաքելութիւն մը, որ կ'ենթադրէ ծառայութիւն եւ նուիրաբերում «որպէսզի մեր հաւաքական աղօթքով, նուիրեալ աշխատանքով, մեզի վստահուած այս համալիրը դարձնենք Մագնիսը մեզ բոլորս ի մի հաւաքող եւ մեր կեանքին մէջ նպատակ ներդրած, այն վերածելով առաքելութեան, որպէսզի քարոզենք եւ ապրինք Աստուծոյ խօսքը, քալենք Քրիստոսի ուղեգծած ճանապարհէն, պահենք ու պահպանենք մեր ազգային սրբազան արժէքները»:

Իր խօսքի աւարտին Սրբազան Հայրը իր խորին երախտիքը փոխանցեց բոլորի ներկայութեան համար: «Տարակոյս չունինք, որ ձեր մնայուն գորակցութեամբ

### Նրա Չայնը Յնչում է Շքեղ Ձուրակի Պէս...

Շարունակուած էջ 15-էն

ուած եղաւ ծրագրից դուրս կատարել եւս երեք երգ:

Նոյն համերգին ներկայ եղող Պարոյր Սեւակը տուել է իր գնահատականը.

Ամարան մեզ դարձրել է ջութակ ու նուագում է մեր ներկերի վրա..., ասել է նա:

Լուսին Ամարայի 1991ի աննախնիք համերգից յետոյ, երգչուհին զանց առաւ այդ օրերին ունենալիք այլ համերգներ ու գնալով Հայկական Ռադիօ, այնտեղ ձայնագրեց մեծածիւր հայկական երգեր եւ ունեաններ: Սրանից էլ ասելի մեծ հայրենասիրութիւն...:

1991ին, 66 տարեկան հասակում Լուսին Ամարան թողեց Մետրոպոլիտանի բեմը, սակայն նա շարունակեց իր համերգային հասարակական գործունէութիւնը:

Այսօր Լուսին Ամարան իր երգչուհի աղջկայ հետ մէկտեղ վարպետութեան դասեր է տալիս Միացեալ Նահանգներում, Կանադայում եւ Մեքսիկայում:

Անկասկած, ամերիկեան օպերային երգչուհի լինելու հետ մէկտեղ, Լուսին Ամարան հայ երգչուհի է, հայ՝ ներքինով, հայ՝ խառն-

ուածքով եւ երեւակայութեամբ: Նրա շրջապատը շնչում է հայօրէն: Ծնուած լինելով Միացեալ Նահանգներում, նա ամերիկացի չղարձաւ: Նա հիանալի խօսում է հայերէն, կապուած է հայ համայնքի եւ Հայ Եկեղեցու հետ, հաւատարիմ է հայկական աւանդութիւններին ու սովորոյթներին:

Առիթիցառիթ, իր պատկառելի տարիքում անգամ հանդէս է գալիս հայկական միջավայրում, հիմնականում կատարելով հայի սրտին մօտ երգեր ու ունեաններ:

Մեզ մնում է դասական, ազնիւ երաժշտութեան սիրահարներին կողմից շնորհաւորել աշխարհահռչակ հայագրի երգչուհի Լուսին Ամարային՝ իր ծննդեան 90ամեակի առթիւ, մաղթելով քաջառողջութիւն եւ վստահեցնել, որ նա եղել է, կայ ու կը մնայ որպէս աշխարհի օպերային արուեստի տիտաններից մէկը, ինչպէս նաեւ Նիւ Եորքի Մետրոպոլիտան օպերային թատրոնի հայ կատարողների Հնգաթեւ աստղի անբաժան թեւը: Այդ աստղը մեր պարծանքն է, մեր հպարտութիւնը: Արժանի լինենք այդ աստղին:

Լուսին Ամարան այսօր 100 տարեկան է: Ողջունէք նրան:

նուիրական այս առաքելութիւնը յաջողութեամբ պիտի պսակուի» ըսաւ Սրբազանը: Ան գնահատանքի իր խօսքը ուղղեց բոլոր նուիրատուներուն եւ ճարտարապետ Արամ Ալաճաճեանին, որ համալիրը կ'օժտէ հայկականութեամբ: Խորին գնահատանքի խօսք յայտնեց խորհրդատու մարմնի անդամներուն, ատենապետութեամբ Յովիկ Դաւիթեանին, որոնց համար՝ եկեղեցի-դպրոց կառուցելու նուիրական այս ծրագիրը մարտահրաւէր մը պիտի դառնայ, համախումբ աշխատանքով վերաշխուժացնելու Կլենտրլի հա-

մայնքը: Առաջնորդ Սրբազանն իր երախտագիտութեան խօսքը յայտնեց նաեւ դպրոցի գլխաւոր բարերար ամուսին՝ մեծայարգ Տէր եւ Տիկին Արման եւ Միւզաննա Նարինեաններուն, ինչպէս նաեւ դատաւորուհի ազնուաշուք Տիկին Շողիկ Վարդանեանին, որոնց ի պատիւ համալիրը պիտի կոչուի Նարինեան անուանով:

Վերաջապէս Սրբազանը շնորհաւորեց Արժանապատիւ Տ. Մանուկ Ա. Քահանայ Մարգարեանը, որուն վստահուած է համալիրի վերատեսուչի պաշտօնը եւ տարածաշրջանի հովութիւնը:

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
 \$ 125,00 (Air Mail) for Canada.  
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State:----- Zip Code:-----  
 Country: -----  
 Tel:-----  
 Email:-----

**ՆԱՅԻՐԻ**  
 Ազգային-Գրական

**ԾԱՆՈՒ Է**

**ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ-Ի**  
**1958 - 1975 թուականներու**  
**Լրիւ Լաթակագմ Հաւաքածոները**

Ցանկացողներէն կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւին

**626-354-5924**

### ԱՄՆ Տիրացաւ CONCACAF-2024 Ազգերու Լիկայի Բաժակին



CONCACAF-ի անդամ երկիրներու ֆուտբոլի Ազգերու Լիկայի Բաժակի աւարտական մրցումին Ամերիկայի Միացեալ Նահանգներու ազգային խումբը 2:0 արդիւնքով պարտութեան մատնեց Մեքսիկայի հաւաքականին:

Թեքսասի մէջ տեղի ունեցած մրցումին կողերը նշանակեցին Թէյլըր Ատամզ 45-րդ վայրկեանին եւ ձիօ Ռէյնա 63-րդ վայրկեանին: ԱՄՆ երրորդ անգամ ըլլալով տիրացաւ Ազգերու Լիկայի Բաժակին:

### Հայաստանի Հաւաքականը Ընկերական Խաղին Պարտուեցաւ Քոսովոյէն



Ֆուտբոլի Հայաստանի հաւաքականը Երեւանի Վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» մարզադաշտին մէջ ընկերական հանդիպում ունեցաւ Քոսովոյի խումբին հետ: Ուքրանացի Ալեքսանդր Պետրակովի գլխաւորած խումբը պարտութիւն կրեց 0:1 արդիւնքով:

25-րդ վայրկեանին Երեւանի «Փիւնիկի» դարպասապահ Ստանիսլավ Բուչնեւի պաշտպանած բերդը գրաւեց թրքական «Պեշիկթաշի» կիսապաշտպան Միլոտ Ռաշիցան: Հայաստանի հաւաքականը կատարեց իր 250-րդ հանդիպումը:

### Ամերիկայի Գաւաթի Բոլոր Մասնակիցները

Յայտնի են Ֆուտբոլի 2024-ի Ամերիկայի Գաւաթի մրցաշարքի բոլոր մասնակից երկիրները: Վերջին երկու նուաճեցին Քոսթա Ռիքայի եւ Գանատայի հաւաքականները:

CONMEBOL COPA AMÉRICA 2024 GROUP DRAW	
<b>GROUP A</b>	<b>GROUP B</b>
ARGENTINA	MEXICO
PERU	ECUADOR
CHILE	VENEZUELA
CONCACAF 5	JAMAICA
<b>GROUP C</b>	<b>GROUP D</b>
USA	BRAZIL
URUGUAY	COLOMBIA
PANAMA	PARAGUAY
BOLIVIA	CONCACAF 6

Ամերիկայի Գաւաթը տեղի կ'ունենայ Յունիսի 20-էն Յուլիսի 14-ը ԱՄՆ-ի 14 քաղաքներու մէջ: Եզրափակիչը տեղի պիտի ունենայ Մայամիի մէջ:

Ամերիկայի Գաւաթ խմբակներն են՝

- A Արժանթին, Փերու, Չիլի, Գանատա
- B Մեքսիկա, Էքուատոր, Վենեզուելա, Ժամայքա
- C ԱՄՆ, Ուրուգուէյ, Փանամա, Պոլիվիա
- D Պրագիլ, Քոլումբիա, Փարակուէյ, Քոսթա Ռիքա

### Լաւագոյն Պրագիլցի Ֆուտբոլիստներու Տասնեակը Պատմութեան Մէջ



Բրիտանական FourFourTwo պարբերականը կազմած է պատմութեան մէջ լաւագոյն պրագիլցի ֆուտբոլիստներու տասնեակը՝ առաջին տեղը նշելով աշխարհի միակ եռակի ախոյեան Փելէին:

Երկրորդ տեղն «Ռեալի», «Պարսելոնայի» եւ «Ինթերի» նախկին խաղացող Ռոնալտոն:

- Փելէ (յարձակող)
- Ռոնալտո (յարձակող)
- Կարինչա (յարձակող)
- Ռոնալտինիօ (կիսապաշտպան)
- Ռոմարիօ (յարձակող)
- Ռիվալտո (յարձակող)
- Չիքօ (կիսապաշտպան)
- Սոկրատէս (կիսապաշտպան)
- Փաիլզինիօ (կիսապաշտպան)
- Քաքա (կիսապաշտպան)

### Իտալիա Պարտութեան Մատնեց Էքուատորին



Ֆուտբոլի Եւրոպայի ախոյեան Իտալիոյ հաւաքականը ԱՄՆ-ի մէջ տեղի ունեցած ընկերական խաղին մրցեցաւ Էքուատորի խումբի հետ եւ առասելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

Նախորդ ընկերական խաղին իտալացիները ԱՄՆ-ի մէջ 2:1 արդիւնքով պարտութեան մատնած էին Վենեզուելային:

### Պրագիլ 17-ամեայ Էնտրիկի Կոլի Շնորհիւ Յաղթեց Անգլիային

Ֆուտբոլի Անգլիոյ հաւաքականը Լոնտոնի «Ուեմպլի» մագմադաշտին վրայ ընկերական հանդիպում պիտեցաւ Պրագիլի խումբի հետ:

80-րդ վայրկեանին Մատրիտի «Ռեալի» յարձակող Վինիսիուս Ժունիորի փոխանցումը կողով աւարտեց պրագիլցի «Պալմէյրասի» 17-ամեայ յարձակող Էնտրիկը: Ան իր առաջին կոլը նշանակեց ազգային խումբէն ներս:

### Արժանթինի Հաւաքականի Յաղթանակը Սալվատորի Դէմ

Աշխարհի ախոյեան Արժանթինի հաւաքականը Ֆիլատելֆիայի մէջ մէջ ընկերական հանդիպումին կատարեց Սալվատորի հաւաքականի հետեւ յաղթեց 3:0 արդիւնքով:

Արժանթինացի հաւաքականի աւագ Լիոնել Մեսին վնասուածքի պատճառով չէր մասնակցեր հանդիպումին:

### Սպանիոյ Հաւաքականը Պարտուեցաւ Քոլումբիայէն

Սպանիոյ եւ Քոլումբիայի հաւաքականները ընկերական հանդիպում ունեցան Լոնտոնի «Ողիմպիական» մարզադաշտին վրայ:

1:0 արդիւնքով առաւելութեան հասան քոլումբիացիները: Միակ կոլը 61-րդ վայրկեանին նշանակեց անգլիական «Քրիսթալ Փելասի» պաշտպան Տանիել Մունիոսը:

### Հոլանտայի Յաղթանակը՝ 4:0, Թուրքիայի Պարտութիւնը՝ 0:1

Հոլանտայի ֆուտբոլի հաւաքականը ընկերական հանդիպում ունեցաւ Սկովտիայի հետ եւ առաւելութեան հասաւ 4:0 արդիւնքով:

Թուրքիոյ հաւաքականը ընկերական խաղին հիւրընկալեց հունկարացիներուն եւ պարտութիւն կրեց 0:1 արդիւնքով: